

361
2-25

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
ՀԻՄՆՈՒԱԾ 1906ԻՆ Ի ԳԱՀԻՐԵ ԵՒ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԱԾ 1924ԻՆ Ի ԼՈՋԱՆ

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր
Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ե Ի

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ

29^{րդ} Տ Ա Ր Ե Շ Ր Ջ Ա Ն Ի

(1 9 3 4)

ՏՊԱՐԱՆ «ԱՐԱՐԱՅ» ԲԱՐԻՋ
Imprimerie «ARARAD» PARIS

1 MAR 2010

361
2-25

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՔ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1906ԻՆ Ի ԳԱՀԻՐԷ

Ե Ի

ՎԵՐԱԿԱԶՄՈՒԱԾ 1924ԻՆ Ի ԼՈԶԱՆ




Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

29^{րդ} ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

(1 9 3 4)



1009
39016
3971



ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ 26^{րդ} ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

(ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱԽԷՐԻ ՎՐԱՅ)

20 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1935

Լ Ո Ջ Ա Ն

ՕՐԱԿԱՐԳ

- 1.— Ընդհանուր Տեղեկագիր 29րդ Տարեշրջանի (1934) :
- 2.— Վաւերացում 1934 Տարեշրջանի Հաշուեկշիռի :
- 3.— Անուանում Հաշուեֆննիչի 1936 Տարեշրջանի համար :
- 4.— Վաւերացում Կեդր. վարչ. ժողովի նորընտիր Անդամի :
- 5.— Մասնակի նորոգում Կեդր. վարչ. ժողովի :
- 6.— Ուղերձներ :

Այսօր, ուրբաթ, 20 Սեպտեմբեր 1935, ժամը չորսին (յ. մ.), Լոզան, Նոտար Մէթր Պերժիէի գրասենեակին մէջ, Տ Ռիւ տիւ Կրան Շէն, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ընդհանուր Ժողովը, որ, 1935 Սեպտեմբեր 6ի օրը, Կանոնադրին 27րդ Յօդուածին (Հատուած Ը.) պայմանադրած մեծամասնութիւնը զոյացած չըլլալուն համար յետաձգուած էր, իր ԻԶ.րդ նիստը դումարեց օրինաւորապէս, երկրորդ հրաւերի վրայ, ատենապետութեամբ Զարեհ Պէյ Նուպարի :

Ատենադպիր ընտրուեցաւ Տ. Վ. Մալէզեան, իսկ քուէակոսյ՝ Տեարք Բրոֆ. Զ. Շէրիաճեան եւ Վահան Քիւրքճեան :

Նախագահը ներկայացուց հետեւեալ թերթերը, որոնց մէջ հրատարակուած է Ժողովին հրաւիրագիրը. —

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ 26^{րդ} ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

(ՆԵԿՐՈՐԴ ԷՐԱԻԷՐԻ ՎՐԱՅ)

20 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1935

Լ Ո Ջ Ա Ն

ՕՐԱԿԱՐԳ

- 1.— Ընդհանուր Տեղեկագիր 29րդ Տարեշրջանի (1934) :
- 2.— Վաւերացում 1934 Տարեշրջանի Հաշուեկշիռի :
- 3.— Անուանում Հաշուեֆնիչի 1936 Տարեշրջանի համար :
- 4.— Վաւերացում Կեդր. վարչ. Ժողովի նորընտիր Անդամի :
- 5.— Մասնակի նորոգում Կեդր. վարչ. Ժողովի :
- 6.— Ուղերձներ :

Այսօր, ուրբաթ, 20 Սեպտեմբեր 1935, ժամը չորսին (յ. մ.), Լոզան, Նոտար Մէթր Պերժիէի գրասենեակին մէջ, Տ Ռիւ տիւ Կրան Շէն, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ընդհանուր Ժողովը, որ, 1935 Սեպտեմբեր 6ի օրը, Կաննոնազրին 27րդ Յօդուածին (Հատուած Ը.) պայմանադրած մեծամասնութիւնը գոյացած չլրարուն համար յետաձգուած էր, իր ԻԶ.րդ նիստը գումարեց օրինաւորապէս, երկրորդ հրաւերի վրայ, ատենապետութեամբ Զարեն Պէյ Նուպարի :

Ատենադպիր ընտրուեցաւ Տ. Վ. Մալեղեան, իսկ քուէախոյզ՝ Տեարք Բրոֆ. Զ. Շէրիւսեան եւ վահան Բիւրքեան :

Նախագահը ներկայացուց հետեւեալ թերթերը, որոնց մէջ հրատարակուած է Ժողովին հրաւիրագիրը. —

«Միութիւն»	Բարիզ	թիւ 173	Մայիս 1935
«Ապագայ»	Բարիզ	թիւ 171	13 Յունիս 1935
«Արեւ»	Գահիրէ	թիւ 5016	6 Յունիս 1935
«Հայաստանի Կոչնակ»	Նիւ Եորք	թիւ 27	6 Յունիս 1935
«Արամազդ»	Արեւիկ	թիւ 340	15 Յունիս 1935
«Արեւելք»	Սելանիկ	թիւ 1515	18 Յունիս 1935
«Վերածնունդ»	Թեհրան	թիւ 196	13 Յունիս 1935

Ներկայութեան տամարէն յայտնի եղաւ որ անձամբ ներկայ եւ փոխանորդարար ներկայացուած անդամներու թիւը 91 է, 157 ձայնի իրաւունքով:

Նախագահը կը յայտարարէ որ, Հիմն. Կանոնադրին 27րդ Յօդուածին համաձայն, ներկայ ժողովը կանոնադրապէս հրաւիրուած եւ զուարթուած է, անկախարար ներկաներու թիւէն, քանի որ առաջին նիստին օրինական թիւ զոյացած չէր, եւ ըստ այնմ ժողովը բացուած կը հռչակէ:

Նախագահը, սղաղգած յարգանքի յիշատակութեամբ ի վեր կը հանէ այն անփոխարինելի կորուստը զոր Միութիւնը ունեցաւ Յուլիսին, մահուամբը Երուանդ Աղաթօն Պէյի, որ, ինչպէս յայտնի է, քանի մը տարիէ ի վեր անկողնոյ կը ծառայէր: Աղաթօն Պէյ այս Միութեան հիմնարկութեան առաջին գործաւորը, ինչպէս նաեւ անոր գործունէութեան մեծագոյն առաքելալը եղաւ, մինչեւ իր վերջին շունչը ցոյց տալով հաւատք մը եւ նուիրում մը զոր հիացումով եւ երախտագիտութեամբ միայն կրնանք յիշել: Ու յարգանքի այս սրտազին արտայայտութեանց կը միացնէ նաեւ անունը ուրիշ Վեթերանի մը, Գահիրէի Երջանակային Յանձնաժողովի ժրջան առնապալի Ծ. Յարութիւն Ամիրայեանի, որ երկար տարիներէ ի վեր հազուադիւս անձնուիրութեամբ մը փարած էր Միութեան, եւ սրուն եզերական մահը Օգոստոսին, միահամուռ վշտակրութեամբ համակեց Միութեան անդամները:

Անդամները յտանկայս լսեցին Նախագահին այս դամբանական խօսքերը եւ արտայայտեցին իրենց սուգը:

Նախագահը, Օրակարգի խնդիրներուն անցնելէ ստաջ, կը բացատրէ թէ Հ. Բ. Ը. Միութիւնը ըլլալով Զուրկերիական Ընկերակ-

ցութիւն մը եւ իր հիմնական կեդրոնատեղին Լոզան գտնուելով, Կանոնադրին 27րդ Յօդուածին համաձայն, որ կը արամազրէ թէ « Ընդհանուր ժողովը կը զուարթուի Լոզան կամ այլուր », Կեդր. Վարչ. ժողովը յարմար գտնեց այս տարի եւս Լոզանի մէջ զուարթել 26րդ Ընդհ. ժողովը, իրաւապէտներու խորհուրդին համաձայն: Ստույգ է որ այսպիսի մեկուսի տեղ մը զուարթուելով Ընդհ. ժողովը, շատերու համար գիւրին չէ անձամբ ներկայ գտնուիլ, բայց զիտելի է նաեւ որ երբ ժամանակին Գահիրէ ու վերջին տարիները Բարիզ կը զուարթուէր Ընդհ. ժողովը, զարձեակ ներկայ եղող անդամներու թիւը սակաւութիւն էր, քանի որ որ ալ զուարթուի ան, այդ տեղը բնակող անդամները միայն զիւրութիւն կ'ունենան անձամբ ներկայ գտնուելու: Բարեբախտարար, Կանոնադրը պատահութիւն կ'ընծայէ որ հետակայ անդամները փոխանորդարար մասնակցին Ընդհանուր ժողովին, ինչպէս որ այս տարի եւս հարիւրաւոր փոխանորդադիրներ զրկուած են: Բաց աստի, Ընդհ. ժողովի Օրակարգը սահմանափակուած ըլլալով, տարրեր հարցերով չի կրնար զբաղիլ ան, եւ կը դոհանայ Կեդր. Վարչ. ժողովի ուշադրութեան փոխանցելով իրեն ներկայացուած զիտուութիւնները, բաղձանքները եւ առաջարկները: Նախագահը կ'եզրակացնէ թէ այս բացատրութիւնները անհրաժեշտ կը նկատէ, պատասխանելու համար բարեմիտ զիտուութեանց, եւ սակայն կրնայ հաւատուիլ որ եթէ Կեդր. Վարչ. ժողովը հարկադրուած է նախապատուութիւն տալ Լոզանի, իրրեւ օրինական հաւաքաւայր, ստիկա չի նշանակել թէ յառաջիկային հնար պիտի չըլլայ Բարիզ զուարթել Ընդհ. ժողովը, համաձայն Կանոնադրի բացորոշ արամազրութեան, եւ այժմէն խի ի վիճակի է յայտարարելու թէ յառաջիկայ տարի Միութեան սոյն պատկասելի ժողովը պիտի զուարթուի Բարիզ:

Նախագահը, արագ տկնարկ մը նետելով անցեալ տարի եւս չեւտուող անտեսական ապգնապին ներգործումներուն վրայ, որ ունեցան իրենց զժրախտ հակազդեցութիւնը Ֆրանսոսայ գաղթականներուն վրայ եւս, անգամ մըն ալ հաստատեց թէ Միութիւնը եւս կրեց այդ մտալիկիչ կացութեան հետեւանքները, աւելցնելով սակայն թէ, հակառակ այդ աննպաստ պայմաններուն, կարելի եղած է հաւատարակչուել Միութեան ելքն ու մուտքը, ըստ նախահաշիւի, եւ 1934ին մուտքի համազուամարը եղած է Ա. Ո. 63183 (որուն 12616 սակին անձեռնմխելի նոր կառկներ եւ նուիրատուութիւններ), իսկ իրրեւ նըզաստ Ա. Ո. 33023 յատկացուած է սպոզուա եւ հայրենաչէն ձեռնարկներու:

Յետոյ, չնորձակալութիւն յայտնելով ներկայ անդամներուն՝ զոր կը յուսայ յառաջիկայ տարի աւելի մեծ թիւով համախմբուած տեսնել Միութեան այս գերագոյն ժողովին սեղանին շուրջը, եւ մասնաւորապէս ողջունելով Ամերիկայի պատգամաւոր եւ Միութեան Վեթերան Անդամ Տ. Վահան Քիւրքճեանի ներկայութիւնը, կը հրաւիրէ Ատենազպիւրը կարգով 1934 Տարեշրջանի Ընդհանուր համարատուութեան Տեղեկագիրը, ինչպէս նաեւ Հաշուեքննիչին Վկայագիրը:

Ժողովը, անցնելով Օրակարգի խնդիրներուն, եւ լսելէ վերջ ներկաներուն ու մասնաւորապէս Տ. Քիւրքճեանի դանազան դիտողութիւնները եւ թելադրութիւնները որ յաւազրով մը պիտի փոխանցուին Կեդր. Վարչ. Ժողովին, յետ խորհրդակցութեան միաձայնութեամբ կը քուէարկէ հետեւեալ սրտչումները. —

Ա.— ՎԱԻԵՐԱՅՈՒՄ ՀԱՇՈՒՆԵՐՈՒ

Ժողովը կ'ընդունի հաշուեքննիչ Տ. Ռուբէն Թաղէտեանի հաշուական Տեղեկագրին եղբակացութիւնները, եւ կը վաւերացնէ 29րդ Տարեշրջանի հաշիւները ինչպէս որ ներկայացուած են իրեն, եւ ըստ այնմ պարտադերձ կ'ընէ Կեդր. Ժողովը այդ շրջանի վարչութեան համար:

Բ.— ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՀԱՇՈՒՆԵՐՆԵՑԻ

1936 տարուան համար իբրեւ Հաշուեքննիչ կը վերընտրէ Տ. Ռուբէն Թաղէտեանը:

Գ.— ՎԱԻԵՐԱՅՈՒՄ ԿԵԴՐ. ԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԱՆԿԱՄԻ

Կը վաւերացնէ յայտնի տնտեսագէտ Տ. Մենսոր Բունեաթեանի ընտրութիւնը որպէս անդամ Կեդր. Վարչ. Ժողովի, սղր. Սերովբէ Սվաճեանի տեղ:

Դ.— ՄԱՍՆԱԿԻ ՆՈՐՈԳՈՒՄ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

Կը վերընտրէ ըստ Կանոնադրի վիճակաւ դադարեալ Կեդր. Ժողովի չորս անդամները՝ Զարեհ Պէյ Նուպար, Տեառք Պ. Էմէրեան, Ա. Արապեան եւ Վ. Մալէգեան:

Ե.— ԱՆՈՒԱՆՈՒՄ ՊԱՏՈՒՅ ԱՆԿԱՄՆԵՐՈՒ

Ընդհ. Ժողովը, ի նշան գնահատութեան, երկար տարիներէ ի վեր իրենց մատուցած ծառայութեանց եւ անձնուիրութեան համար, Պատ-

ւոյ Անդամ կ'անուանէ Կեդր. Վարչ. Ժողովի անդամները Տեառք Տիգրան Կամսարական եւ Լեւոն Կիւմիւշէրտան, ինչպէս նաեւ Գահիրէի Շրջ. Յանձնաժողովի անդամներ Տ. Ճանիկ Չազըր եւ (յետ մահու) սղր. Յարութիւն Ամիրայեան:

Զ.— ՈՒՂԵՐՁՆԵՐ

Ժողովը կը քուէարկէ հետեւեալ սրտչումները. —

1.— Յոռնկայս իր մշտական յարգանքը կ'արտայայտէ Միութեան բազմերախտ Հիմնադիրներուն՝ յաւէտ ողբացեալ Պօղոս Նուպար Փաշայի, Եագուպ Արքին Փաշայի եւ Երուանդ Պէյ Աղաքօնի, ինչպէս նաեւ ազգային Բարերար Կարապետ Աղա Մելգոնեանի, ու Հ. Բ. Ը. Միութեան հանգուցեալ վեթերան եւ այլ բոլոր անդամներուն յիշատակին:

2.— Սրտագին խնդակցութիւն Խ. Հայաստանի վերաշինական նոր եւ հսկայ նուաճումներուն համար, եւ շնորհակալութիւն Կառավարութեան կողմէ Հ. Բ. Ը. Միութեան ընծայուած օժանդակութեանց համար:

3.— Զերմ գնահատանք եգիպտոսի եւ Ամերիկայի Շրջ. Յանձնաժողովներուն, անոնց գործակցող Յանձնախումբերուն, Միութեան բոլոր Մասնահիւղներուն եւ Օժանդակներուն, իրենց ազգանուէր գործակցութեան համար:

4.— Անկեղծ շնորհակալութիւն Միութեան բոլոր անդամներուն, նուիրատուներուն, այն ամէն բարեսէր ազգայիններուն, ինչպէս նաեւ հոգեւորականներուն եւ խմբագիրներուն, որ իրենց բարոյական կամ նիւթական օժանդակութեամբ ստտարեցին Միութեան բարգաւաճման:

5.— Խորին շնորհակալութիւն Կեդր. Վարչ. Ժողովին եւ անոր Նախագահին, որ Միութեան գործերը կը վարեն ձեռնհասօրէն եւ խղիմտօրէն:

Նախադասը կը յայտարարէ թէ Օրակարգի խնդիրները սպառած են եւ նիստը կը փակէ ժամը 7ին:

Ատեմաղայի	Ատեմաղայ
Վ. ՄԱԼԷՉԵԱՆ	ԶԱՐԵՀ ՆՈՒՊԱՐ
	Քուէարկողներ
Բրոֆ. Տոքթ. Զ. ՇԵՐԻՏՃԵԱՆ	Վ. Մ. ՔԻԻՐՔՃԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ Տ. ՌՈՒԲԷՆ ԹԱԴԷՈՍԵԱՆԻ

Պատ. Ընդհանուր ժողով Հ. Բ. Ը. Միութեան
Լոզան

Տեարք.

1933 Սեպտեմբեր 22ին ինծի յանձնուած պաշտօնին համաձայն Հ. Բ. Ը. Միութեան 1934 Տարեշրջանի կեդրոնական Հաշուակալութեան հաշիւները քննեցի, և, յետ քննութեան, կը յայտարարեմ թէ 1934 Դեկտեմբեր 31ին Հաշուեկշիռը իր կցեալներով, ինչպէս նաեւ սոյն Տարեշրջանին հաշուական կացութիւնը, համապատասխան են հաշուետոմարներուն, վաւերացնելով թերուն և զրամատուներու գոյութեանց:

Հետեւաբար պարտք կը համարիմ առաջարկել ձեզի հաստատել սոյն Հաշուեկշիռը, և կատարել տալ Միութեան արժեթուղթերուն և անշարժ կալուածներուն արժէքին վերաբնահատումը, անմիջապէս որ կարելի ըլլայ:

Բարից, 9 Օգոստոս 1935

Խորին յարգանքով
Հաշուեքննիչ
ՌՈՒԲԷՆ ԹԱԴԷՈՍԵԱՆ

ԿԵԴՐ. ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԶԱՐԵՀ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ	Նախագահ
ՎՍԵՄ.Տ.ԳԱԲՐԻԷԼ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ	Պատուակալ փոխ-Նախագահ
ԵՐՈՒԱՆԳ ՊԷՅ ԱՂԱԹՕՆ	Պատուակալ փոխ-Նախագահ
ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ԲԷԼԷԿԵԱՆ	Փոխ-Նախագահ
ԱՌԱՔԵԼ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ	Փոխ-Նախագահ
Տ. ՊՕՂՈՍ ԷՍՄԵՐԵԱՆ	Փոխ-Նախագահ
Տ. ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻԾԿԷՐՏԱՆ	Գանձապահ
Տ. ՎԱՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ	Վարիչ-Պատուիրակ
Տ. ԱՐԱՅ ԱՐԱՊԵԱՆ	Վարիչ-Անդամ
ԲՐՈՅ. ՄԵՆՏՈՐ ԲՈՒՆԻԱԹԵԱՆ	Վարիչ-Անդամ
Տ. ԳԷՈՐԳ ԷՍԱՅԵԱՆ	Վարիչ-Անդամ
Տ. ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ	Վարիչ-Անդամ
Տ. ԳԱԻԻԹ ՄՍՐԵԱՆ	Վարիչ-Անդամ
Տ. ՏԻՐԱՆ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ	Վարիչ-Անդամ

Տ. ՌՈՒԲԷՆ ՓԱՓԱԶԵԱՆ	Իրաւագէտ-Խորհրդական
Տ. ԶԱՐԵՀ ՍՐԱՊԵԱՆ	Իրաւագէտ-Խորհրդական
Տ. Ս. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐՕՅ	Ելմտագէտ-Խորհրդական
Տ. Մ. ԵԱԶԸՃԵԱՆ	Ելմտագէտ-Խորհրդական

Տ. ՌՈՒԲԷՆ ԹԱԴԷՈՍԵԱՆ	Հաշուեքննիչ
---------------------	-------------

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

(29րդ ՏԱՐԵՇՐՁԱՆ 1934)

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հ. Բ. Ը. Միութեան Հիմնական Կանոնադրին 27րդ Յօդուածին (Յ. Հասուած) համաձայն, Կեդր. Վարչ. Ժողովը պատիւ ունի Ընդհանուր Ժողովին ներկայացնելու 29րդ Տարեշրջանի, այսինքն 1934 տարուան համարատուութիւնը, ըստ կարելւոյն ամփոփ, կրկնութիւններ չընելու համար:

Ներկայ Տեղեկագիրը, որ կ'ընդգրկէ Միութեան միամեայ ընդհանուր գործունէութիւնը, չորս մասերու բաժնուած է. —

- Առաջին, Միութեան վարչական գործունէութեան ամփոփումը:
- Երկրորդ, երմտական կացութեան պատկերը:
- Երրորդ, նոր կտակներու, նութրատուութեանց եւ հանգանակութեանց վիճակացոյցը:
- Չորրորդ, Օգնութեան ձեռնարկներու մանրամասնութիւնը:
- Սոյն համարատուութեան կ'ընկերանան հաշուական ութ կցեալներ. —

- 1.— Հաշուեկշիռ 31 Դեկտեմբեր 1934ի:
- 2.— 1934 տարուան հասոյթներուն եւ ծախքերուն ամփոփ հաշուեցոյցը, յետագայ հինգ ցուցակներուն մէջ մանրամասնուած:
- 3.— Ընդհանուր Հասոյթներ:
- 4.— Մասնաւոր Հասոյթներ:
- 5.— Արտասովոր Հասոյթներ:

- 6.— Ընդհանուր Ձեռնարկներ եւ Նպաստներ:
- 7.— Ընդհանուր Ծախք:
- 8.— Դրամագլուխներու վիճակը 31 Դեկտ. 1934ին:

Հաշուական բոլոր գործողութիւնները պարբերաբար քննուած եւ ճիշդ գտնուած են Տ. Ռուբին Թաղէտեանի կողմէ, որուն Ընդհ. Ժողովը իր 22 Սեպտ. 1933ի նիստին մէջ Հաշուեքննիչի պաշտօնը վստահած էր, եւ որուն հաստատագիրը կ'արտագրենք սոյն Տեղեկագիրին սկիզբը:

Ա. ՄԱՍ

ՎԱՐՁԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ա. — ԸՆԳԻՋԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

1934ին Միութեանն Ընդհանուր Ժողովը իր տարեկան 25րդ նիստը գումարեց 21 Սեպտեմբերին, Լոզանի մէջ, նախագահութեամբ Զարեհ Նուպար Պէյի, եւ վաւերացուց 1933 տարեշրջանի համարառութիւնը, զանազան երկիրներէ եկած յարգելի անդամներու գեկուցումները լսելէ եւ կարգ մը ուղերձներ քուէարկելէ վերջ:

Այս առիթ եւս Ընդհ. Ժողովը իր 26րդ նիստը կը գումարէ Լոզան, որովհետեւ Միութեանն օրինական կեդրոնատեղին է եւ կանոնադիրը Կեդր. Վարչ. Ժողովը արտօնած է ըստ պարագայի Ընդհ. Ժողովը գումարել Լոզան կամ Բարիդ սւր կը գտնուի իր վարչական կեդրոնատեղին:

Ընդհանուր Ժողովի գնահատման եւ վաւերացման ենթարկուած Օրակարգի վիճակը խնդիրներն են՝

- Ա. — Ընդհ. Տեղեկագիր 29րդ Տարեշրջանի (1934):
- Բ. — Վաւերացում 1934 Տարեշրջանի Հաշուեկշիռի:
- Գ. — Անուանում Հաշուեքննիչի 1936 Տարեշրջանի համար:
- Դ. — Վաւերացում Կեդր. Վարչ. Ժողովի նոր Անդամի ընտրութեան:
- Ե. — Մասնակի նորոգում Կեդր. Վարչ. Ժողովի:
- Զ. — Ուղերձներ:

Նկատի ունենալով մեր Միութեան կազմակերպական համաշխարհային բնոյթը, քանի որ անոր Մասնաճիւղները եւ Անդամները ցըրուած են գաղութներու մէջ, շատերը իրարմէ մեծ հեռաւորութեամբ

անջատուած, Ընդհ. Ժողովը ս'եր որ ալ գումարուի, սակաւթիւ անգամներ միայն կրնան ներկայ գտնուիլ: Այսուհանդերձ, Հիմն. կանոնադիրը իր նախատեսութեամբը զործնական գործման մը գտած է, ընդունելով փոխանորդարար ներկայացուելու գրութիւնը, զոր ի պաշտօնէ իրաւամբ կրնան օգտագործել Մասնաճիւղներու բոլոր վարիչ անդամները եւս, որպէս իրենց շրջանին ներկայացուցիչները:

Բ. — ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ինչպէս անցեալ տարուան Տեղեկագրին մէջ պարզեցինք, 1933ի Գեկուցումներ 14ին տեղի ունեցաւ նախագահական ընտրութիւնը, եւ միաձայնութեամբ Կեդր. Վարչ. Ժողովի նախագահ ընտրուեցաւ Զարեհ Պէյ Նուպար, իսկ փոխ-նախագահ Առաքել Պէյ Նուպար, որ սիրալոթար յանձն առին իրենց մեծանուն հօր զործը շարունակել: Նորինաբար նախագահը 5 Յունվար 1934 թուականով Յայտարարութիւն մը հրատարակեց, կոչ ընելով բոլոր բարի կամեցողութեանց:

Յետոյ, սղբացեալ Տ. Սերովբէ Սվաճեանի մահուամբը թափուր մնացած վարչական պաշտօնին կոչուեցաւ յայտնի անտեսագէտ Բրոֆ. Մենտոր Բուճիաթեան, որ իբրեւ Կեդր. Վարչ. Ժողովի վարիչ անգամ գնահատելի ծառայութիւն կը մատուցանէ, զլիաւորարար իր մարդին մէջ ուր կը վայելէ բարձր հեղինակութիւն մը:

1934ը մեղի համար եղաւ սուգի տարի մը: Ազգային բեծ բարերար Տ. Կարապետ Մելլոնեան, 85 տարեկան հասակին մէջ, մեռաւ Աղեքսանդրիոյ մէջ, 22 Յունիսին, եւ իր մեծաշուք յուզարկաւորութիւնը կատարուեցաւ, ազգային փառաւոր ցոյցերով եւ բազմահազար ժողովրդեան ներկայութեամբ, նախ՝ Աղեքսանդրիոյ մէջ, 25 Յունիսի օրը, նախագահութեամբ Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Թորգոմ Արքեպիսկոպոսի, որ յատկապէս Աղեքսանդրիա փութացած էր՝ վերջին յարգանք մը ընծայելու համար անդուգական Բարերարին, յետոյ, Նիկիոսիոյ մէջ ուր փոխադրուեցաւ իր գմուսեալ մարմինը, 19 Օգոստոսին, նախագահութեամբ Կիլիկիոյ ձերունազարդ Վեհափառ Սահակ Կաթողիկոսի եւ Աթոսակից Բարդէն Կաթողիկոսի, որ նոյնպէս Անթիլիանէն յատկապէս Կիպրոս գացած էր ընդունելու համար Բարերարին Մարմինը, որ ամփոփուեցաւ, ըստ իր կտակին, Մելլոնեան Կրթական Հաստատութեան շրջափակին մէջ: Յետոյ Աղեքսանդրիայէն հոն փոխադրուեցան նաեւ իր սղբացեալ եղբոր Տ. Գրիգոր Մելլոնեանի աճիւնները: Առաջագրած ենք շքեղ յուշարձան մը կանգ-

նել այդ նուիրական հողակոյտին վրայ, ուր կը հանդէին Մելգոնեան անձաճ հարազատները, ամբողջ ազգին անմոտաց երախտադիտութեանը մէջ, այն աննախընթաց նուիրատուութեան համար որով պանծացուցին եւ յաւերժացուցին իրենց անունը:

Անցեալ տարեշրջանի գլխաւոր դէպքերէն մին եղաւ նաեւ Միութեանս Հիմնադիր եւ Բարերար Անդամ Երուանդ Պէյ Ազաթօնի Յորելանը, իր 75րդ տարեդարձին առթիւ, որ սօնուեցաւ մեծալայելուչ հանդիսութիւններով, գլխաւորաբար Բարիդի, Նիսի, Գահիրէի եւ Նիւ Եորքի մէջ: Մեր Պատուակալ Փոխ - Նախագահին Յորելանը պատեհութիւն ընծայեց իր բազմաթիւ բարեկամներուն համակրանքի խանդալառ ցոյցերով եւ ուղերձներով արտայայտելու իրենց հիացումն ու դնահատանքը, անոր որ Միութեանս հիմնադրութեան օժանդակեց եւ մինչեւ վերջը, հակառակ որ ծերութիւնը եւ հիւանդութիւնը դրեթէ անչարժութեան մատնած էին իր տառապազին կեանքը, միակ մտասեւեռում մը ունեցաւ, ծառայել շ. Բ. Ը. Միութեան եւ անոր միջոցաւ օգտակար ըլլալ ազգին եւ հայրենիքին:

Բայց մահը, որ դարանակալ կը սպասէր արդէն իր սնարին մօտ, եկաւ խելէ այդ բազմարեղուն կեանքը, ներկայ Տեղեկագրի խմբագրութեան վերջին օրերուն, 12 Յուլիսի ուրբաթ օրը, Նիսի մէջ, թողլով անփոխարինելի պակաս մը, ոչ միայն Միութեանս համար, որուն անխոնջ եւ անձնուէր առաքելալը հանդիսացաւ Ազաթօն Պէյ մինչեւ իր վերջին շունչը, այլ եւ մեր ազգին համար, որուն ծառայեց գործնական միտքով եւ հաղուագիւտ անձնուիրութեամբ մը:

Անցեալ տարուան ընթացքին գծրախտութիւնը ունեցանք նաեւ արձանագրելու մահը Միութեանս Յրէզնոյի վեթերաններէն Պատուոյ Անդամ ծերունագարդ Տ. Յակոբ Նշկեանի, որ Գալիֆօրնիոյ շրջանին մէջ Միութեանս հիմնադիր եւ ղեկավար վաստակաւորներէն եղած է, ինչպէս նաեւ Սուրիոյ մէջ Տ. Օննիկ Մաղլումեանի, որ Հալէպի եւ Պէյրութի Մասնաժողովներուն մէջ գործօն դեր մը կատարած է տարիներով, եւ Գահիրէի մէջ Տ. Յովսէփ Գուլումճեանի, որ Միութեանս Վանի Վարժապետանոցին առաջին տնօրէնը եղած է եւ Տարօնի վարժարաններուն եւս կրթական տեսուչը:

Նորընտիր Նախագահին կարգադրութեամբը անցեալ տարի աւելի հաստատ հիմերու վրայ գրուեցաւ Կեղր. Վարչութեան աշխատանքի եւ պարտականութեան բաժանումի սկզբունքը, եւ իր կողքին անընդհատօրէն գործեցին, կարեւորագոյն հարցերը ուսումնասիրելու եւ եզրակացնելու պաշտօնը ունեցող երբեակի Մարմինները, Նի-

մտական Յանձնաժողովը, իր կրկին բաժանումներովը, նախագահութեամբ Տեարք Էմէրեանի եւ Էսայեանի, Իրաւագիտական Յանձնաժողովը նախագահութեամբ Տ. Արայ Արապեանի, եւ Օգնութեան ու Բրորականութի Յանձնաժողովը, նախագահութեամբ Տ. Տիգրան Կամսարականի: Այդ Յանձնաժողովներուն, որ կատարեցին խիստ պէտքով զնահատելի գործ մը, մասնաւորապէս անասական տաղնապին ստեղծած գծուարութեանց դէմ Միութիւնը պաշտպանելու մտահոգութեամբ, իրենց բարեհաճ աշխատակցութիւնը ընծայեցին մասնագէտներ գնահատելի փութաջանութեամբ:

Թէեւ անցնող տարին աւելի բախտաւոր շեղաւ քան նախորդները, եւ անասական ելեւէջները յառաջ բերին տաղնապալից գրութիւն մը բոլոր երկիրներու մէջ անխտիր, սակայն եւ այնպէս ուրախ ենք յայտնելու որ Կեղր. Վարչ. ժողովը, օրը օրին հետեւելով դէպքերուն եւ Միութիւնս շահախնդրող բոլոր հարցերը իր անմիջական ուշագրութեան առարկայ դարձնելով, յաջողեցաւ յատկացնել ձեռնարկներու եւ նպատանքու 33023.16. 9 անդլ. սակի գումար մը, որ ցոյց կուտայ թէ հակառակ աշխարհը ցնցող գծուարութեանց մեր Միութիւնը կը պահէ իր կենսունակութիւնը եւ կարող կ'ըլլայ ներկայ անգոհալից շրջանին ալ կատարել իր գերը, ինչպէս մեր հայրենիքին, նոյնպէս եւ գաղութահայութեան հանդէպ: Այդ շրջահայեաց եւ իրատես ոգիին շնորհիւ է որ անցեալ տարի եւս կարողացանք հաւասարակշիւ Միութեանս ելեւմուտքը, Միութեանս անձեռնմխելի հիմնադրամները իրենց նպատակներէն շեղեցնելու եւ իր նիւթական կարողութենէն աւելի նպատանք յատկացնելու բողոքախառն հրաւերներուն չանսարով, այն օրինապահութեամբ եւ խոհականութեամբ որ կը յատկանշեն այս Միութեան վարիչները:

Նկատի առնելով որ վերջերս շ. Բ. Ը. Միութեան դէմ նոր եւ յամառ պայքար մը բացուած է կարգ մը ընդդիմադիր թերթերու կողմէ, միտքերու լուսարանութեան համար որոշեցինք աւելի յաճախ զեկոյցներ հրատարակել եւ օրը օրին Միութեանս անդամները, եւ առհասարակ հայ ժողովուրդը իրազեկ ընել մեր Միութեան գործունէութեան: Այս առթիւ չենք կրնար հրատարակաւ մեր ցաւը չի յայտնել այն անձաճ յարձակումներուն համար որոնց կ'ենթարկուի շ. Բ. Ը. Միութեան նման համազգային մեծ ընկերակցութիւն մը, որ անցեալին մէջ նախախնամական դեր մը կատարած է եւ ներկայիս ալ բարեք ընելու իր բարձր կոչումին հաւատարիմ մնացած ըլլալով, ամէն պղպասէր Հայու քաջալերանքին եւ օժանդակութեան պէտք ունի,

Տուժիւնը շահեկան խորհրդակցութիւններ կատարելու համար, առհասարակ Միութեանս ընդհանուր գործերուն եւ գլխաւորապէս Եզրայտտի շրջանակին նկատմամբ, որոնց լոյսին տակ յայտ եկաւ թէ մեր Միութիւնը Արեւելքի մէջ անսխալ կը պահէ միշտ իր կենսունակութիւնը, եւ հակասակ տնտեսական ներկայ աննպաստ պայմաններուն իր կազմակերպական մեքենան կ'ընդարձակուի:

Գ.— ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ստոյգ է որ վերջին տարիներու ընթացքին ամէնէն աւելի Միութեանս Ամերիկայի շրջանակին էր որ ազդուեցաւ տնտեսական տագնապէն, այն ստախճան որ անդամավճարներու եւ այլ տրամադրելի հասոյթներու նուազումը զգալապէս ազդեց մեր ելեւմուտքին վրայ, մէկէ աւելի ձեռնարկներ եւ զանազան նպաստներու յատկացումը անհնարին դարձնելով: Արդարեւ, այդ շրջանակը, որ երկար տարիներ այս Միութեան մեծագոյն ստատար հանդիսացաւ իր անմրցելի զոհողութիւններով, եւ անոր կարեւորագոյն ձեռնարկներուն յաջողութեան գլխաւոր ազդակը նկատուեցաւ, զգալի ընկրկում մը ցոյց տուաւ, որ կը բացատրուի մանաւանդ անգործութեան հետեւանքով, ա՛յն աստիճան որ երէկի նուիրատուները հետզհետէ նպաստընկալի տխուր դիրքը գրաւեցին երբեմնի այդ բարգաւաճ երկրին մէջ ուր բարեգործութիւնը հրաշքներ կը գործէր:

Այսուհանդերձ, դնահատելի են այն ամէն ջանքերը զոր, լաւագոյն օրերու ակնկալութեամբ, կ'ընէ Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողովը, իր անձնուէր նախագահին Տ. Արչակ Գարակէօզեանի ուղղութեամբը, ինչպէս նաեւ օժանդակութիւնները զոր այդ Յանձնաժողովին կ'ընծայեն Միութեանս զաղափարականին եւ իրենց ուխտին հաւատարիմ մնացող Մասնաճիւղներ եւ Վեթերաններ: Այդ համերաշխ ջանքերուն չորհիւ անցեալ տարուան հասոյթները եղած են 33·000 տոլար, իսկ ծախքերը 7731 տոլար: Վերողբեալ զուժարին 7729 տոլարը կը ներկայացնէ կտակներու արժէքը, 7875 տոլար զանձուած է Նուպարաչէնի թաղամասերու եւ Նոր Եւզոկիոյ համար, իսկ 2410 տոլար եւս փոխանցելի հաշիւներէ կը բաղկանայ: Անցեալ տարուան անդամավճարներու զուժարը յանդամ է 5115 տոլարի:

Ամերիկայի Խորհրդակցական Համաժողովը անցեալ տարի իր 21րդ զուժարումը ունեցած է Պրուքլին, Մայիս 26 - 27, մասնակցութեամբ 57 պատգամաւորներու:

Այդ Համաժողովին կողմէ Նիւ Եորքի Երջ. Յանձնաժողովը մասնակի փոփոխում մը կրած է, ընտրութեամբը վիճակաւ զաղարեալ անդամներու տեղ (Տեարք Մ. Գարակէօզեան, Կ. Փուշման եւ Պ. Թէրզեան) Օր. Ա. Ատանալեանի, Տ. Մարտիկ Պալեօզեանի եւ Տօքթ. Ա. Լետիս Բէյի:

Ըստ այնմ, Նիւ Եորքի Երջանակային Յանձնաժողովը վերակազմուած է հետեւեալ կերպով. — Տեարք Ա. Գարակէօզեան՝ ատենապետ, Վեր. Ս. Պէննէեան՝ փոխ-ատենապետ, Տ. Յ. Կիւլպէնկեան՝ զանձապետ, Տ. Վ. Բիւրքճեան՝ ատենադպիր եւ պատուիրակ, Տ. Տ. Տիրատուբեան՝ բ. ատենադպիր, Օր. Ա. Ատանալեան, Տեարք Տ. Տիքիճեան, Մ. Պալեօզեան եւ Տօքթ. Ա. Բէյ՝ խորհրդակցականներ:

Ըստ սովորութեան, Գալիֆօրնիոյ շրջանը եւս, որ մաս կը կազմէ Ամերիկայի ընդհանուր շրջանակին, Փէսէտէնայի մէջ զուժարած է իր տարեկան Համաժողովը, 19 Մայիս 1934ին: Սոյն Շրջանային Յանձնախումբը եւս հետեւեալ կազմը ունեցած է. — Վեր. Մ. Փափաղեան՝ ատենապետ, Տօքթ. Ա. Շահպաղեան՝ փոխ-ատենապետ, Տօքթ. Վ. Ճզգալեան՝ ատենադպիր, Տեարք Ա. Եաղրճեան՝ բ. ատենադպիր, Գ. Մելիքեան՝ զանձապահ, Տօքթ. Ս. Ալեքսանդր եւ Յ. Կոստանեան՝ խորհրդակցականներ:

Նոյնպէս Նիւ Ինկլէնտի Երջ. Յանձնախումբը իր աշխատակցութիւնը շարունակած է, եւ իր կազմը նոյնը մնացած է, ողբ. Լազարեան Վարդապետի տեղ Արթ. Յ. Քահ. Թումանեան նշանակուած ըլլալով:

Նիւ Եորքի Երջ. Յանձնաժողովին գլխաւոր գործունէութիւնը եղած է, 1934ին, հետապնդումը կարգ մը կտակներու իրագործման, Նուպարաչէնի հանգանակութեան եւ թաղամաս կամ շէնք կառուցանող Հայրենակցականներու մասնակցութեան, գործադրութիւն Հայաստանի վերաբերեալ ապսպրանքներու (գլխաւորաբար ինքնաշարժ կառքերու գնում), Աղաթօն Պէյի Յորեկեանին առթիւ կազմութիւնը հիմնադրամի մը (1500 տոլարի բաժինով մը), եւն.:

Այդ Յանձնաժողովի կողքին այնքան սրտազին նուիրումով գործող Նիւ Եորքի Տիկնանց Յանձնախումբը, իր որբախնամ գործին միացուց կը թական եւ շինարարական նպատակներ ալ եւ առ այդ մտադրած է Նուպարաչէնի մէջ դարձմանատուն մը հաստատել, իսկ Միութեան կը թական ձեռնարկներուն յատկացուցած է 1500 տոլար:

Տեղական ընկերային ծառայութեան գործը անցեալ տարեշրջանին ալ շարունակուեցաւ արդիւնաւորապէս, 1805 տոլար տրամադրուելով յօգուտ կարօտեալներու:

Ե.— ՄԱՍՆԱՃԻՒՂՆԵՐ

Անցեալ Տարեշրջանին ուղղակի Կեդր. Վարչութեան ենթակայ Մասնաճիւղներուն թիւը 39 եղաւ, Ավիլէնկերատի (Պուլկարիա) մէջ նոր Մասնաճիւղ մը կազմուած ըլլալով: Ասոնք կը գտնուին Եւրոպայի (բացի Յունաստանէն) եւ Հարաւ. Ամերիկայի մէջ, ու Ափրիկէն լսկ Գաղապլանքա, որ սակայն իր 1934ի գործունէութեան համարը չէր տուած դեռ, նոյնպէս եւ տասնեակ Մասնաժողովներ որ անգործութեան մատնուած էին գժրախտարար:

Որքան որ տնտեսական պայմանները աւելի եւս աննպաստ դարձած էին եւ գործազրկութիւնը շեշտուած էր նոյն իսկ բարեկեցիկ գաղութներու մէջ, պէտք է սակայն խոստովանինք թէ այս շրջաններու Մասնաժողովները ասոհասարակ դնահատելի գործունէութիւն մը ցոյց տուին, անփոփոխ պահելով անդամներուն թիւը, դանձելով անդամավճարները, կատարելով նուիրահատարութիւններ եւ կազմակերպելով հանդէսներ: Այդ ջանքերուն շնորհիւ վերողբեալ շրջաններուն մէջ գանձուած անդամավճարներուն համազումարը, որ 1933ին Ա. Ո. 1553 էր, անցեալ տարի բարձրացած է Ա. Ո. 2073. 6. 0ի: Միմիայն Բարիդի մէջ գանձուած է իրր անդամավճար Ա. Ո. 1022.10. 3, որուն 290.19. 8 սակին Կեդրոնի անդամներէն:

Հասոյթի առաւելութեան կողմէ 1934ին եւս առաջին գիծին վրայ կուգայ Բարիդը, շնորհիւ այդ Մասնաժողովին վարիչներուն օրինակելի անձնուիրութեան: Յետոյ՝ Պուկնոս — Այրէսի, Քոնսթանցայի, Մանչեսթըրի, Պուքըէշի, Բրոյտիփի եւ Կալացի Մասնաճիւղները, որոնց բարի օրինակին յայտ ունինք որ ուրիշ Մասնաճիւղներ եւս պիտի հետեւին, եւ արդէն սմանք ատոր յայտարար նշանները ցոյց կուտան այժմ:

Ներկայ տարուան սկիզբը (6 Յունվարին) մեր ժրաջան պաշտօնակիրը Տ. Լեւոն Կիւմիւլէզիբոսան ազնուութիւնը ունեցաւ Լոնտոն այցելելու, ուր բանախօսեց Միութեանս Մասնաժողովին սարքած հրատարակային հանդէսին եւ այդ Մասնաժողովին վերակազմութեամբը նոր գործունէութեան մը գետինը պատրաստեց այդ փոքր բայց կարեւոր գաղութին մէջ:

Իսկ ամբան սկիզբը՝ Միութեանս Բարիդի գործիչը Տ. Օ. Թագէտեան բորբականտի շրջան մը բրաւ Ֆրանսայի մէջ, իսկ Յունաստանի գործիչ Տ. Կ. Սանիկեան Պուլկարիա կատարեց այցելութիւն մը, որոնց մասին պիտի անդրադառնանք յաջորդ Տեղեկագրին մէջ, ներկայացնելով ձեռք բերուած նշանակելի արդիւնքները:

1934ի սկիզբը Եգիպտոսի Երջանակի Մասնաճիւղներու թիւն էր 74: Տարւոյն ընթացքին հետեւեալ 11 նոր Մասնաճիւղները կազմուեցան. — Սուբիոյ եւ Լիրանանի մէջ՝ Աթըզ, Այն-էլ-Աբուս, Ալէյ, Սուդ-Սու, Բիհանիէ եւ Աֆրին, Յունաստանի մէջ՝ Գորֆու, Սէրէզ եւ Գանտիա, Պարսկաստանի մէջ՝ Թավրիզ եւ Իրազի մէջ ալ Սիւլէյ-մանիէ: Դարձեալ, տարւոյն ընթացքին վերակազմուեցան Յունաստանի մէջ Տէտէ-Աղաճի եւ Վալոյի Մասնաճիւղները, որոնցմէ առաջինը ընդհանուր պատերազմէն ի վեր դադարած էր գործելէ: Միւս կողմէ, չորս Մասնաճիւղներ կազմալուծուած ըլլալով, տարւոյն վերջը այդ շրջանակին Մասնաճիւղներուն թիւը յանդած է 83ի, իսկ անդամներուն թիւը բարձրացած է 5067ի, 292ի յաւելում կրելով:

1934ին այս Մասնաճիւղներուն գանձումներուն դումարը եղած է 3148 Եդ. Ոսկի:

Գահիրէի Երջ. Յանձնաժողովը այս անգամ եւս զիտել կուտայ իր տարեկան Տեղեկագրին մէջ թէ անհրաժեշտ է իւրաքանչիւր երկրի մէջ գործիչներ ունենալ, որ այդպիսի գործերու մէջ թէ՛ օժանդակեն Մասնաժողովներուն եւ թէ՛ միաժամանակ նուիրուին բորբականտի գործին, քանզի Մասնաժողովները, պատուակալ Մարմիններ ըլլալով, աւելին չեն կրնար ընել եւ արդէն իրենց ձեռք բերած արդիւնքը արուած պայմաններուն մէջ իսկապէս դնահատելի է: Այս իսկ տեսակետով Մասնաժողովներուն ցոյց տուած անձնուիրութիւնը ու գործունէութիւնը ամէն դնահատանքի արժանի է, մանաւանդ երբ նկատի ունենանք նաեւ թէ՛ անոնք ոչ միայն հարկադրուած են կանոնաւոր աշխատանք տանիլ՝ հասոյթներու զոյացման համար, այլ նաեւ զմազբաւելու այն խոչընդոտները ու զժուարութիւնները որ կը յարուցուին իրենց ազգանուէր ջանքերուն դէմ:

1934ին, Յունաստանի շրջանը գործիչով մը օժտուեցաւ յանձին Տ. Կ. Սանիկեանի, որ իր այդ պաշտօնին հետ վարեց նաեւ նպաստընկալ Վարժարաններու կրթական քննչութիւնը: Յուսալի է որ իր պաշտօնավարութիւնը պիտի տայ շօշափելի արդիւնք, դատելով առաջին քառամսեայ շրջանէն: Տ. Վ. Բազրեւանդեան եւս այս տեսակետով աշխատանք տարաւ Մակեդոնիոյ շրջանին մէջ: Իսկ Վեր. Հ. Սանդամուր շարունակեց իր գործունէութիւնը Գահիրէի եւ մասամբ Աղեքսանդրիոյ մէջ: Նոյնպէս Տ. Մ. Նաթանեան որոշ չափով մը օգտակար հանդիսացաւ Սուբիոյ եւ Լիրանանի մէջ բորբականտի մարզին մէջ, իր այցելած վայրերու Մասնաճիւղները խթանելով եւ վերակազմելով քանի մը կազմալուծուած Մասնաճիւղներ:

1934ին, դարձեալ, Եգիպտոսի Շրջանակին Մասնաճիւղներու շարքին մէջ թէ՛ անդամներու թիւին եւ թէ՛ հասոյթներու տեսակէտով առաջնութիւնը կը զբաւէ Հալէպի Մասնաճիւղը եւ յաջորդաբար Աղեքսանդրիոյ, Պէյրութի, Երուսաղէմի եւ Պաղտատի Մասնաճիւղները:

Ինչպէս ըսինք, Ամերիկայի Մասնաճիւղներէն սմանք անուանական գոյութիւն մը միայն ունին, եւ ընդհանուր առմամբ օրուան անդոհները ջլատած են երբեմնի սղեւորութիւնը զոր ցոյց կուտային անոնք: Այսուհանդերձ, պատուիրակներու եւ զործիչներու այցելութեանց չնորհիւ 15 Մասնաճիւղներ վերակազմուած են անցեալ տարի եւ 200 նոր անդամներ արձանագրուած են: Կազմակերպութեան եւ բրորականտի աշխատութեանց մէջ զնահատելի բաժին մը ունեցած է մեր բարեկամը Տ. Լեւոն Զէնեան, իր այցելութիւններով եւ բանախօսութիւններով:

Նիւ Եորքի կեդրոնական շրջանին մէջ առաջին զիծին վրայ կուգայ տեղւոյն Մասնաճիւղը, 902 տուարի տարեկան հասոյթով, յետոյ Նիւարք 304, Պրուքլին 300 եւ Ֆիլատէլֆիա 250 տուարի ընդհանուր հասոյթով:

Նիւ Ինկլէնտի շրջանին մէջ առաջնութիւնը կուգայ Ուստրին 384 եւ յետոյ Պոսթոնի 317 տուարի հասոյթով:

Արեւելեան Միջին Նահանգներու մէջ ամէնէն արդիւնաւորը եղած Շիքահոյի Մասնաճիւղը 1810 տուարի հասոյթով, հետեւաբար եւ ամբողջ Ամերիկայի մէջ առաջինը հանդիսացած է անցեալ տարի: Իրմէ վերջ կուգայ Տիթթոյթ 240 տուարով:

Իսկ Գալիֆօրնիոյ շրջանակին յաջողագոյն Մասնաճիւղները եղած են Լոս Անձէլըս 526, Փրէզնօ 536, Սօսէպթօ 312 եւ Սան Ֆրանչիսքօ 214 տուարի տարեկան հասոյթով:

Այդ մեծ շրջանակին մէջ Միութեանս կրտսերաց Լիկաները ունեցած են զնահատելի զործունէութիւն մը: Իրենց ճիւղերուն թիւն է 19, իսկ անդամներուն 600: Կեդր. Մարմինը կը բաղկանայ եօթը անդամներէ, որոնց երեքը Շրջան. Յանձնաժողովին ներկայացուցիչներն են: Անցեալ տարուընէ սկսեալ Համաժողովին որոշմամբ Կրտսերաց Լիկայի մէկ ներկայացուցիչին աթոս մը յատկացուած է Նիւ Եորքի Շրջ. Յանձնաժողովին մէջ:

Բ. ՄԱՍ

ԵԼՄՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Այս մասին Ա. Բաժանումին մէջ կը պատկերացնենք Միութեան 1934ի հասոյթներն ու ծախքերը, եւ Բ. Բաժանումին մէջ՝ 31 Դեկտեմբեր 1934ի Հաշուեկշիռին վիճակը:

Աւելորդ չէ թերեւս կրկնել թէ Հ. Բ. Ը. Միութեան հասոյթները կ'երեւան իրարմէ անջատ հետեւեալ հաշիւներուն մէջ. —

1.—ԸՆԴՅ. ՀԱՍՈՅԹՆԵՐՈՒ ՀԱՇԻՒ, ուր կ'արձանագրուին՝

ա) Հիմնական Դրամագլուխին եւ պարտադիր նուիրատուութեանց եւ կտակներուն եկամուտները.

բ) մեր զանազան հաստատութեանց, ձեռնարկներուն եւ սպասարկութեանց սահմանուած այն բոլոր հասոյթները, որոնց գործածութիւնը Կեդր. վարչ. ժողովին նախաձեռնութեան բողոսած է առանց մասնաւոր յատկացումներու:

2.—ՄԱՍՆԱԻՈՐ ՀԱՍՈՅԹՆԵՐՈՒ ՀԱՇԻՒ, ուր կ'արձանագրուին՝

կտակուած կամ նուիրուած դրամագլուխներու եկամուտները, գոր Կեդր. վարչ. ժողովը պարտաւոր է գործածել ըստ իրենց կանխորոշ յատկացումներուն:

3.—ԱՐՏԱՍՈՎՈՐ ՀԱՍՈՅԹՆԵՐՈՒ ՀԱՇԻՒ, ուր կ'արձանագրուին՝

այն հանգանակութիւնները եւ նուիրատուութիւնները որոնց իւրաքանչիւրը ամբողջովին սահմանուած է միակ նպատակի մը, այսինքն որք ձեռնարկի մը, եւ ոչ թէ, ինչպէս Ընդհանուր Հասոյթներուն մէջ, Միութեան ձեռնարկներու ամբողջութեանը:

Գալով զբաժնեւոր արձանագրութեանց, 1931էն առաջ մեր հաշուաւորութիւնը կը կատարուէր 5 տուարը, 124 Ֆրանս. Փրանքը եւ 25 Զուից. Փրանքը 1 անգլ. սոկիի հաշիւով: Անգլիական սոկիին անկումին պատճառով, 1931էն սկսեալ, սպասելով որ իր սակը կայուն վի-

ճակ մը ստանայ, յարմար դատեցինք այդ սակերը փոխել եւ 1934ին հաշուադրութեան հիմ բռնեցինք սուլար 5, Փրանս. Փրանք 75 եւ զուեց. Փրանք 15ը՝ իբրեւ համարժէք 1 անդլ. սակի, երբ հասոյթները գանձուած եւ ծախքերը վճարուած են միեւնոյն դրամով, իսկ երբ յիշեալ դրամները փոխուած են անդլ. սակի կամ անդլ. սակին յիշեալ դրամներուն, կամ ուրիշ դրամներու, տարբերութիւնը արձանագրուած է իբր շահ կամ վնաս իր պատկան հաշուոյն մէջ: Միայն Դրամադրութիւններու հաշիւները անխախտ պահուած են հին սակով, մինչեւ որ կարելի ըլլայ վերագնահատուած մը ընել:

Ա . Բ Ա Ժ Ա Ն Ո Ի Մ

29րդ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ (1934) ՀԱՍՈՅԹՆԵՐՆ ՈՒ ԾԱԽՔԵՐԸ

Այս տեղ կը ներկայացնենք հաշիւը՝

Ա. ԳԼՈՒԽԻՆ մէջ, 1934ի հասոյթներուն,

Բ. ԳԼՈՒԽԻՆ մէջ, 1934ի յատկացումներուն եւ ծախքերուն,

Գ. ԳԼՈՒԽԻՆ մէջ, 1934 Դեկտեմբեր 31ին արամադրելի մնացած գումարներուն:

Ա. ԳԼՈՒԽ — ՀԱՍՈՅԹՆԵՐ

1934ին, վերել բացատրուած մեր հասոյթի երեք հաշիւներուն մուտքին անցած են հետեւեալ գումարները. —

I.— ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՈՅԹՆԵՐ

Ընդհանուր հասոյթներու հաշիւին մուտքը, որուն մանրամասնութիւնները կ'երեւան թիւ 3 կցեալին մէջ, հետեւեալ կերպով կ'ամփոփուի. —

Ա.— 1934 ՅՈՒՆԿԱՐ 1 ԻՆ ՏՐԱՄԱԳՐԵԼԻ ԳՈՒՄԱՐ (1) Ա. Ո. 17723. 4. 8

Բ.— 1934 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՀԱՍՈՅԹՆԵՐ

ա) ԴՐԱՄԱԳՐՈՒԽԻ ԵԿԱՄՈՒՏ

1. Պարտադիր կտակներու եւ նուիրատուութեանց եկամուտ Ա.Ո. 18325.19. 1

2. Հիմնական Դրամագլուխի եկամուտ ,, 2689. 4. 3

Գումար Ա.Ո. 21015. 3. 4

բ) ՈՒՐԻՇ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՈՅԹՆԵՐ

1. Մուտքի տուրքեր Ա.Ո. 135.19. 5

2. Անդամավճարներ ,, 5133.11.11

3. Յօգուտ որքերու նուիրատուութիւններ ,, 2008. 6.11

4. Զանազան հասոյթներ ,, 3137. 2. 1

5. Տոկոս, սակէ շահ, եւն. ,, 504.17. 8

Գումար Ա.Ո. 10919.18 0

1933 տարեշրջանի հասոյթներուն գումարը 31935. 1. 4

Համագումար Ա.Ո. 49658. 6. 0

Միութեանս երեք Շրջանակները հետեւեալ գումարներով մասնակցած են 1934 տարեշրջանի ընդհանուր հասոյթներուն. —

Կեդրոն (Բարիզի շրջանակ) Ա. Ո. 5076.19. 7

Ամերիկայի Շրջ. Յանձնաժողով ,, 2353.18. 0

Եգիպտոսի Շրջ. Յանձնաժողով ,, 3489. 0. 5

Գումար Ա. Ո. 10919.18. 0

Կեդր. Դրասենեակին կողմէ

մէ գանձուած Դրամագլուխներու եկամուտ ,, 21015. 3. 4

վերագրեալ գումարը Ա. Ո. 31935. 1. 4

Ա. Ո. 31935. 1. 4

(1) Ըստ 1933ի տեղեկագրին (կցեալ 1), 1934ին փոխադրելի գումարն էր Ա. Ո. 17319. 4. 5: Տարբերութիւնը բացատրուած է թիւ 3 կցեալին մէջ:

II.— ՄԱՍՆԱԻՈՐ ՀԱՍՈՅԹՆԵՐ

Մասնաւոր Հասոյթներու հաշիւին մուտքը, որուն մանրամասնութիւնները կ'երևան թիւ 4 կցեալին մէջ, հետեւեալ կերպով կ'ամփոփուի. —

Ա.— 1934 ՅՈՒՆՎԱՐ 1 ԻՆ ՏՐԱՄԱԳՐԵԼԻ ԳՈՒՄԱՐ (1)	Ա. Ո.	3746. 3. 7.
Բ.— 1934 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՀԱՍՈՅԹՆԵՐ		
ա) Մասնաւոր յատկացումներով նոր կտակներ եւ նուիրատուութիւններ	Ա. Ո.	12616.16. 9
բ) Մասնաւոր յատկացումներով կտակներու եւ նուիրատուութիւններու եկամուտ	,,	10809.17. 7
Գումար	Ա. Ո.	23426.14. 4
Համագումար	Ա. Ո.	27172.17.11

III.— ԱՐՏԱՍՈՎՈՐ ՀԱՍՈՅԹՆԵՐ

Արտասովոր Հասոյթներու մուտքի կողմը, որ 5 թիւ կցեալին մէջ մանրամասնուած է, ամփոփ կերպով հետեւեալ պատկերը կը ներկայացնէ. —

Ա.— 1934 ՅՈՒՆՎԱՐ 1 ԻՆ ՏՐԱՄԱԳՐԵԼԻ ԳՈՒՄԱՐ (2)	Ա. Ո.	9441. 9. 2
Բ.— 1934 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՀԱՍՈՅԹՆԵՐ		
1. Նուպարաշէնի հանգանակութիւն	Ա. Ո.	3941. 9. 1
2. Ներգաղթի հանգանակութիւն	,,	199. 2. 0
3. Յօգուտ գաղթականներու հանգան.	,,	1377. 7.10
4. Ուրիշ արտասովոր հասոյթներ	,,	1945. 4.11
5. Պատրաստ գումարներու տոկոս	,,	358. 0. 6
Գումար	Ա. Ո.	7821. 4. 4
Համագումար	Ա. Ո.	17262.13. 6

(1) Ըստ 1933ի Տեղեկագրի (կցեալ 1), 1934ին փոխադրելի գումարն էր Ա. Ո. 3715. 1. 0: Տարբերութիւնը բացատրուած է թիւ 4 կցեալին ներքեւ:

(2) Ըստ 1933ի Տեղեկագրի (կցեալ 1), 1934ին փոխադրելի գումարն էր Ա. Ո. 9975. 0. 3: Տարբերութիւնը բացատրուած է թիւ 5 կցեալին ներքեւ:

Երեք շրջանակները հետեւեալ բաժինը ունեցած են 1934 Տարե-
շրջանի արտասովոր Հասոյթներու գոյացման մէջ. —

Կեդրոն (Բարիզի շրջանակ)	Ա. Ո.	5052.13. 4
Ամերիկայի Շրջ. Յանձնաժողով	,,	2534.10.10
Եգիպտոսի Շրջ. Յանձնաժողով	,,	234. 0. 2
Վերոգրեալ գումարը	Ա. Ո.	7821. 4. 4

IV.— ՀԱՍՈՅԹՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ

Մեր Հասոյթներուն ամբողջութիւնը հետեւեալ կերպով կը ներկայանայ ուրեմն. —

Ա.— 1934 ՅՈՒՆՎԱՐ 1 ԻՆ ՏՐԱՄԱԳՐԵԼԻ ԳՈՒՄԱՐ (1)	Ա. Ո.	30910.17. 5
Բ.— 1934 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՀԱՍՈՅԹՆԵՐ		
1. Ընդհանուր հասոյթներէ	Ա. Ո.	31935. 1. 4
2. Մասնաւոր հասոյթներէ	,,	23426.14. 4
3. Արտասովոր հասոյթներէ	,,	7821. 4. 4
Գումար	Ա. Ո.	63183. 0. 0
Գումար (տե՛ս կցեալ թիւ 2)	Ա. Ո.	94093.17. 5

Բ. ԳԼՈՒԽ. — ՅԱՏԿԱՅՈՒՄՆԵՐ ԵՒ ԾԱԽՔԵՐ

Այս գլուխը կը բաժնենք հինգ հատուածի, այսինքն՝

1. Դրամագումարներու յատկում եւ յատկացումներ,
2. Չեռնարկներ եւ ընդհանուր օգնութեան նպաստներ,
3. Կենսաբոյրակներ եւ այլ մասնաւոր ծախքեր,
4. Ընդհանուր ծախքեր,
5. Համագումար յատկացումներու եւ ծախքերու:

(1) Ըստ 1933ի Տեղեկագրի (կցեալ 2), 1934ին փոխադրելի գումարն էր Ա. Ո. 31009. 5. 8: Տարբերութիւնը բացատրուած է թիւ 3, 4 եւ 5 կցեալներուն մէջ:

I.— ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐՈՒ ՅԱԻԵԼՈՒՄ ԵՒ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ

Ա.— Դրամագլուխներու վրայ բարդուած են՝

1) Ընդհանուր Հասոյթներէն (տե՛ս կցեալ քիւ 3)	Ա. Ո.	1425. 2. 8
2) Մասնաւոր Հասոյթներէն (տե՛ս կցեալ քիւ 4)	„	14078. 3. 2
Գումար	Ա. Ո. (1)	<u>15503. 5. 10</u>

II.— ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՍՏՆԵՐ

1934ին ձեռնարկներու եւ ընդհանուր նպատակներու համար մեր ծախքերը հետեւեալ կերպով բաժնուած են մեր պիւտճէին զանազան գլուխներուն վրայ (տե՛ս կցեալ թիւ 6) . —

1. Հայաստանի ձեռնարկներ	Ա. Ո.	7981. 13. 0
2. Որբեր եւ Որբանոցներ	„	11356. 11. 7
3. Գաղթականներու օգնութիւն	„	3362. 0. 1
4. Կրթական նպատակներ	„	5260. 3. 10
5. Պատրիարքարաններու եւ քաղաքական ձեռնարկներ	„	2721. 10. 7
6. Թոշակընկալ սաներ	„	1227. 8. 7
7. Առողջապահական նպատ	„	245. 11. 6
8. Նուպարեան Մատենադարան	„	640. 5. 5
9. Զանազանք	„	228. 12. 2
Գումար	Ա. Ո.	<u>33023. 16. 9</u>

Այս ծախքը հողացուած է (տե՛ս կցեալ թիւ 2)

Ընդհանուր Հասոյթներէն	Ա. Ո.	23285. 15. 4
Մասնաւոր Հասոյթներէն	„	3959. 6. 10
Արտասովոր Հասոյթներէն	„	5778. 14. 7
Վերագրեալ գումարը	Ա. Ո.	<u>33023. 16. 9</u>

Ներկայ համարատուութեան չորրորդ մասին մէջ, այս ծախքերուն իւրաքանչիւրին նկատմամբ մանրամասն տեղեկութիւններ տրուած են :

(1) Դրամագլուխներու յաւելում	Ա. Ո.	13481. 5. 6
Պահեստի Հիմնադրամի յաւելում	„	2022. 0. 4
Վերագրեալ գումարը	Ա. Ո.	<u>15503. 5. 10</u>

III.— ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ ԵՒ ՄԱՍՆԱԻՈՐ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ

1934ին, կենսաթոշակներու եւ զանազան սպասարկութեանց գումարն է՝

Ընդհանուր Հասոյթներէն	Ա. Ո.	6831. 10. 3
Մասնաւոր Հասոյթներէն	„	399. 0. 9
Գումար	Ա. Ո.	<u>7230. 11. 0</u>

Այս ծախքերը, որ մանրամասնուած են թիւ 3 եւ 4 կցեալներուն մէջ, կատարուած են պարտադիր կամ մասնաւոր յատկացումներ ունեցող նուիրատուութեանց պայմանագրութեանց համաձայն : Կենսաթոշակներու վճարուած գումարը պիտի դործածուի մեր զանազան ձեռնարկներուն՝ երբ զաղբին սպառաջին :

IV.— ԶԱՆԱԶԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

Այս գլուխին մէջ կ'երեւայ Ա. Ո. 3201. 5. 10ի գումար մը, որ կազմուած է հաշուական փոխանցումներով : Մասնաւոր Հասոյթներէն տարուած Ընդհ. եւ Արտ. Հասոյթներուն եւ պարտական հաշիւներուն :

V.— ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՔԵՐ

1934ին, մեր Ընդհանուր Ծախքերը հետեւեալներն են (տե՛ս կցեալ թիւ 7) . —

Կեդրոնական ԳՐԱՍԵՆՆԱԿ		
Վարչական ծախք	Ա. Ո.	4188. 7. 4
Բրորակաւորի ծախք	„	607. 10. 5
Տուրք	„	338. 16. 4
Տեղ. Մասնաժողովներու ծախք	„	590. 19. 10
Գումար	Ա. Ո.	<u>5725. 13. 11</u>
Փոխադրելի	Ա. Ո.	5725. 13. 11

	Փոխադրեալ	Ա. Ո.	5725.13.11
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ			
վարչական ծախք	Ա. Ո.	1444.14. 3	
Բրտրականտի ծախք	,,	59.13. 5	
Տեղ. Մասնաժողովներու մասնակի ծախք	,,	30. 0. 0(1)	
Գումար	Ա. Ո.	—————	1534. 7. 8
ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ			
վարչական ծախք	Ա. Ո.	829. 4. 3	
Բրտրականտի ծախք	,,	216.13.11	
Տեղ. Մասնաժողովներու ծախք	,,	752.15. 0	
Գումար	Ա. Ո.	—————	1798.13. 2
Համագումար	Ա. Ո.	9058.14. 9	

VI.— ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՅԱՏԿԱՅՈՒՄՆԵՐՈՒ ԵՒ ԾԱԽՔԵՐՈՒ

Ըստ նախորդ գլուխներու, յատկացումներն ու ծախքերը հետևեալ գումարներուն կը հասնին.—

Ընդհանուր Հասոյթներ (տե՛ս կցեալ թիւ 3)

Դրամագլուխներու վրայ բարդը- ւած գումարներ	Ա. Ո.	1425. 2. 8
Ձեռնարկներու համար ծախսուած	,,	23285.15. 4
Կենսաբոշակներ եւ մասն. յատկացումներ	,,	6831.10. 3
Ընդհանուր ծախք	,,	8106. 9. 7
Գումար	Ա. Ո.	—————
		39648.17.10

Մասնաւոր Հասոյթներ (տե՛ս կցեալ թիւ 4)

Դրամագլուխներու վրայ բարդը- ւած գումարներ	Ա. Ո.	14078. 3. 2
Ձեռնարկներու համար ծախսուած	,,	23285.15. 4
Կենսաբոշակներ	,,	399. 0. 9
Ընդհանուր եւ արտակարգ հասոյթ- ներու եւ պարտական հաշուին փոխանցում	,,	3201. 5.10
Ընդհանուր ծախք	,,	594. 4. 8
Գումար	Ա. Ո.	—————
		22232. 1. 3
Փոխադրելի	Ա. Ո.	61880.19. 1

(1) Ամերիկայի տեղական Մասնաժողովներու մեծագոյն մասը գուտ հասոյթ-ները միայն հաշուի անցընելու սովորութիւնը ունենալուն, Շրջ. Յանձնաժողովին ուշադրութիւնը հրաւիրուած է մուտքին կողմը հասոյթները եւ ելքին կողմը ծախքերը առանձնապէս նշանակելու անհրաժեշտութեան վրայ:

	Փոխադրեալ	Ա. Ո.	61880.19. 1
<i>Արտասովոր Հասոյթներ (տե՛ս կցեալ թիւ 5)</i>			
Ձեռնարկներու համար ծախսուած	Ա. Ո.	5778.14. 7	
վարչական ծախսարամին	,,	358. 0. 6	
Գումար	Ա. Ո.	—————	6136.15. 1
<i>Համագումար (տե՛ս կցեալ թիւ 2)</i>			
	Ա. Ո.	68017.14. 2	
Դրամագլուխներու վրայ բարդը- ւած գումարներ	Ա. Ո.	15503. 5.10	
Ձեռնարկներու համար ծախսուած	,,	33023.16. 9	
Կենսաբոշակներ եւ մասնաւոր յատկացումներ	,,	7230.11. 0	
Հաշուական փոխանցումներ	,,	3201. 5.10	
Ընդհանուր ծախք	,,	9058.14. 9	
Գումար	Ա. Ո.	—————	68017.14. 2

Գ . Գ Լ Ո Ւ Խ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1934ԻՆ ՏՐԱՄԱԳՐԵԼԻ ԳՈՒՄԱՐՆԵՐ

Հասոյթներուն համագումարէն (տե՛ս գլուխ Ա.)	Ա. Ո.	94093.17. 5
Գեղջելով վերոգրեալ յատկացումներն ու ծախքերը	,,	68017.14. 2
1934 Դեկտ. 31 ին տրամադրելի գումարն է՝ փոխանցուած		
1 Յունվար 1935 ին	Ա. Ո.	26076. 3. 3

Այս գումարը հետեւեալ կերպով կը բաժնուի զանազան գլուխներուն վրայ.—

Ընդհ. Հասոյթներ	Ա. Ո.	10009. 8. 2
Մասնաւոր Հասոյթներ	,,	4940.16. 8
Արտասովոր Հասոյթներ	,,	11125.18. 5
վերոգրեալ գումարը (տե՛ս թիւ 2,3,4 եւ 5 կցեալները)	Ա. Ո.	26076. 3. 3

որ արդէն ներկայ տարուան ընթացքին յատկացուած է եւ կամ պիտի

յատկացուի ամբողջութեամբ ձեռնարկներու, ըստ մեր Հիմնական կանոնագրին, սլարտադիր կամ մասնաւոր յատկացումներով եղած կտակներու եւ նուիրատուութեանց, ինչպէս նաեւ Հանդանակութեանց պայմաններուն :

Բ . Բ Ա Ճ Ա Ն Ո Ի Մ

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1934ԻՆ

Յետադայ երկու զլուխներուն մէջ կը բացատրենք Հաշուեկշիռին իւրաքանչիւր թուանշանը սկսելով պարագէն, եւ երկրորդ զլուխ մը կը յատկացնենք 31 Դեկտեմբեր 1934ի գոյացուցակի բացատրութեան :

Ա. ԳՆՈՒԽ. — ՀԱՇՈՒԵԿՇԻՌՈՒԻՆ ՊԱՐՏՔԸ

Ա. — ԴՐԱՄԱԳՆՈՒԽՆԵՐ

I. — ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳՆՈՒԽ

31 Դեկտեմբեր 1933 ին Մայր Տոմարին արձանագրութեանց համաձայն մեր Հիմնական Դրամագույնին արժէքն էր
Ա. Ո. 64108.18. 6

1934 ին (տե՛ս կցեալ Թիւ 3) այս Դրամագույնին վրայ բարդուած են՝

Մուտքի տուրքերը

Ա. Ո. 135.19. 1

Աւելցնելով արժեքուղբերու վանառումէն գոյացած շահը

Գումար Ա. Ո. 64244.17. 7

Հետեւաբար, 31 Դեկտեմբեր 1934 ին Հիմնական Դրամագույնին արժէքը եղած է

Ա. Ո. 43. 7. 3

Ա. Ո. 64288. 4.10

Վերոյիշեալ Դրամագույնը կը բաղկանայ՝

Թրքերի մաս կազմող արժեքուղբերէ

Ա. Ո. 59975. 6. 0

Դրամատանց մէջ պահուած արժեքուղբերէ

„ 2320. 6. 9

Շարժուն գոյքերէ

„ 888.19. 0

Անշարժ գոյքերէ

„ 674.13. 4

Հնչուն դրամէ

„ 428.19. 9

Գումար (տե՛ս կցեալ Թիւ 8)

Ա. Ո. 64288. 4.10

II. — ՊԱՐՏԱԳԻՐ ԿՏԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒՐԻԹԵԱՆՅ ԴՐԱՄԱԳՆՈՒԽՆԵՐ

Պարտագիր կտակներու եւ նուիրատուութեանց Դրամագույններուն (այս Գույնին մէջ կը մտնէ Մեկգոնեան նուիրատուութիւնը) արձանագրուած արժէքն էր, 1933 Դեկտեմբեր 31 ին,
Ա. Ո. 556365. 8. 9

1934 ին (տե՛ս կցեալ Թիւ 3) այս Դրամագույնին վրայ բարդուեցաւ նոր արժեքուղբի ստացումի իրանումներուն վանառումէն գոյացած շահը
Գումար Ա. Ո. 140.11. 6
Ա. Ո. 556506. 0. 3

Ձեղջելով արժեքուղբերու վանառումէն գոյացած վնասը
2147. 9. 6

Հետեւաբար, 1934 Դեկտեմբեր 31 ին, այս Դրամագույններուն արձանագրուած արժէքն էր
Ա. Ո. 544358.10. 9

որ կը բաղկանայ՝
Թրքերի մաս կազմող արժեքուղբերէ Ա. Ո. 443870.19. 5
Դրամատան մէջ պահուած արժէքուղբերէ „ 1. 0. 0
Անշարժ կալուածներէ „ 75096. 6. 9
Չոյլ ոսկիէ „ 25307. 1. 5
Հնչուն դրամէ „ 83. 3. 2
Գումար (տե՛ս կցեալ Թիւ 8) Ա. Ո. 544358.10. 9

III. — ՄԱՍՆԱԻՐ ՅԱՏԿԱՅՈՒՄՆԵՐ, ԿՏԱԿՆԵՐ ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒՐԻԹԻՒՆՆԵՐ

1933 Դեկտեմբեր 3 ին այս Դրամագույններուն արձանագրուած արժէքն էր
Ա. Ո. 272887. 6.11

Արժեքուղբերու վանառումէն գոյացած շահը
„ 274.17.11

Ա. Ո. 273162. 4.10

ուրիշ գեղջուեցաւ՝

ա) Տիկ. Հանիկեանի ժառանգորդներուն եղած վնասը Ա. Ո. 1269.15. 8

բ) Մ. Չերազի նուիրատուութեան Հայաստան փոխադրումը „ 640.14. 4

Ձեղջելի Ա. Ո. 1910.10. 0 1910.10. 0

Ջուտ Փոխադրելի Ա. Ո. 271251.14.10

Իսկ 1934 ին ստացանք հետեւեալ կտակները եւ նուիրատուութիւնները	Փոխադրեալ	Ա. Ո.	271251.14.10
ա) Ա. Պօննուզեան	Ա. Ո.	8510.17. 7	
բ) Հ. Սեբեան	,,	4758.14. 5	
գ) Ղ. Լազարեան վարդապետ	,,	1048. 5. 0	
դ) Ա. Զօքեանի կտակին քերիաշիւ	,,	45. 0. 0	
ե) Մ. Ա.ի հիմնադրամին յաւելում	,,	208. 4. 0	Ա. Ո. 14571. 1. 0

Ասկէ զատ, նուիրատուութեանց պայմաններուն համաձայն, Գրամագլուխի վրայ բարդեցինք հետեւեալ կտակներուն եւ նուիրատուութեանց եկամուտները՝

Հիմնադրամ Նուպարեան Սաներու	Ա. Ո.	226.14. 1
Հիմնադրամ Մարի Նուպար Ակնարուժարանի	,,	140.10. 2
Հիմնադրամ Նուպարեան Մատենադարանի	,,	80. 8. 8
Հիմնադրամ Յ. Գըրքեաշարեանի	,,	57. 1. 6
Հիմնադրամ Մ. Ա.ի	,,	83. 3. 9
Գումար (տե՛ս կցեալ քիւ 4)		<u>587.18. 2</u>

Հետեւաբար, մասնաւոր յատկացումով կտակներու եւ նուիրատուութեանց ընդհ. արժէքը 1934 Դեկտ. 31 ին եղաւ՝

Համագումար Ա. Ո. 286410.14. 0

Այս համագումարը բաղկացած է հետեւեալ կերպով (տե՛ս կցեալ քիւ 8) .—

Թրքսքի մաս կազմող արժեքուղբեր	Ա. Ո.	98600.12.10
Գրամատանց մէջ պահուած արժեքուղբեր	,,	103354. 1.10
Անշարժ գոյքեր	,,	72708. 4. 8
Շարժուն գոյքեր	,,	3119.14. 3
Հնչուն դրամ	,,	3237. 6. 0
Պարտական հաշիւով պահանջներ	,,	5390.14. 5
Գումար	Ա. Ո.	<u>286410.14. 0</u>

Բ.— ՊԱՀԵՍՏԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ

I.— ՊԱՀԵՍՏԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԻՄՆ. ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻ

1933 Դեկտեմբեր 31 ին այս Հիմնադրամն էր	Ա. Ո.	3631.16. 2
1934 ին (տե՛ս կցեալ քիւ 3) այս Գրամագլուխին վրայ բարդուեցան		
ա) անդամավճարներու 1/6 ը	Ա. Ո.	855.17. 3
բ) Հիմնական Գրամագլուխի եկամուտին 1/10 ը	,,	268.18.10
գ) Պարբերաշիջման կանխատեսուած քանակ	,,	23.16. 0
Գումար	Ա. Ո.	1148.12. 1
ուրկէ գեղջուեցաւ դրամական սակի տարբերութեան վնասը	,,	39. 1.10
		<u>1109.10. 3</u>
1934 Դեկտ. 31 ին այս Հիմնադրամին գումարն էր	Ա. Ո.	<u>4741. 6. 5</u>

II.— ՊԱՀԵՍՏԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՍՆԱԽՈՐ ՅԱՏԿԱՅՈՒՄՆԵՐՈՎ ԵՂԱԾ ԿՏԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆՅ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐՈՒՆ

Այս Հիմնադրամն էր 1933 Դեկտեմբեր 31 ին	Ա. Ո.	6251.19. 2
1934 ին ասոր վրայ բարդուեցան՝		
ա) նուիրատուութեանց պայմանագրութեանց մէջ կանխատեսուած յատկացումները՝ որ կը ներկայացնեն (տե՛ս կցեալ քիւ 4)	,,	873. 8. 3
ուրկէ գեղջուեցաւ	,,	7125. 7. 5
Մ.Զեբազի պահեստի դրամը նուպարաշէն փոխադրուած	,,	18. 2. 7
1934 Դեկտ. 31 ին այս Հիմնադրամին գումարն էր	Ա. Ո.	<u>7107. 4.10</u>

Գ.— ՊԱՀԱՆՁԱՏԵՐ ՀԱՇԻՒՆԵՐ

I.— ԱԻԱՆԴԻ ՀԱՇԻՒՆ

Աւանդի հաշիւը կը պարունակէ՝

ա) Ա. Հիմնադրութեան Գրամագլուխի հաշույն.—		
Գրամատան մէջ պահուած արժեքուղբերը՝ որոնց յայտարարուած արժէքն է	Ա. Ո.	12718. 3. 5
եւ պատրաստ դրամ	,,	796. 7.11
Գումար	Ա. Ո.	<u>13514.11. 4</u>
բ) Եգիպտոսի որբուհիներուն խնայողութիւնը	Ա. Ո.	6843. 2. 6
գ) Ուրիշ դրամական աւանդներ	,,	5033. 0. 1
Համագումար	Ա. Ո.	<u>25390.13.11</u>

II.— ԶԱՆԱԶԱՆ ՊԱՀԱՆՁԱՏԵՐՆԵՐ

Զանազան պահանջատեղիներու հաշիւը կը պարունակէ՝

ա) Գումարներ որ իբր ծախս գոյց տրուած են 1934 Տարեշրջանի հաշիւներուն մէջ՝ Ձեռնարկներու եւ կենսաթոշակներու համար, որովհետեւ այդ տարեշրջանին ծախսներուն կը պատկանին եւ սակայն 1935 տարւոյ մէջ վճարուած են՝
Ա. Ո. 1364. 9. 3

բ) Զարեհ Պէյ Նուպարի պահանջը Հայաստանի մէջ Բարեգործականի Տան շինութեան համար	..	2550. 0. 0
գ) Հայաստանի կառավարութեան պահանջը	..	1428. 7. 11
դ) Հայաստանի Օգնութեան կոմիտէի պահանջը	..	3052. 9. 1
ե) Ներգաղթի Ֆոնտի կոմիտէի պահանջը	..	631. 17. 8
զ) Պահանջատէր ուրիշ հաշիւներ	..	39. 7. 0
որ կ'ամբողջացնեն Հաշուեկշիռին մէջ նշանակուած գումարը	Ա. Ո.	<u>9066. 10. 11</u>

Գ.— 1934 ԴԵԿՏԵՄԲԵՐ 31ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼԻ ԳՈՒՄԱՐՆԵՐ

1934 Դեկտեմբեր 31 ին տրամադրելի գումարներուն համար
Ա. Ո. 26076. 3. 3
(տե՛ս ներկայ Տեղեկագրին 31րդ էջը)

Բ. ԳԼՈՒԽ — ՀԱՇՈՒԵԿՇԻՌԻՆ ԳՈՅՔԻԸ

Վերոյիշեալ պարտքին դէմ ունինք յետագայ հատուածներու մէջ յիշուած գոյքը:

Ա.— ՇԱՐԺՈՒՆ ԵՒ ԱՆՇԱՐԺ ԳՈՅՔԵՐ

Ունինք հետեւեալ գոյքերը՝

ա) Թրքսի մաս կազմող արժեքուղիքեր (արձանագրութեան արժէք)	Ա. Ո.	602446. 18. 3
Դրամատանց մէջ արժեքուղիքներ (արձանագրուած արժէք)	1. Զանազան դրամատանց գումարներու հաշուոյն	105675. 8. 7
	2. Ս. Հիմն. հաշուոյն	12868. 3. 5
	3. Տրամադրելի գումարներու հաշուոյն	4886. 4. 3
	Գումար	<u>123429. 16. 3</u>
բ) անշարժ գոյքեր որոնց արձանագրուած արժէքն է	Ա. Ո.	725876. 14. 6
գ) Շարժուն գոյքեր որոնց արձանագրուած արժէքն է	..	148479. 4. 9
	..	41421. 5. 5
Համագումար	Ա. Ո.	<u>915777. 4. 8</u>

Թիւ 8 կցեալին մէջ պիտի գտնուի այս գոյքերուն բաժանումը զանազան Դրամադրուիւններու միջև:

Բ.— Պ Ա Տ Ր Ա Ս Տ Դ Ր Ա Մ

Մեր գոյքը իբր պատրաստ դրամ, որ մանրամասնուած է Հաշուեկշիռին մէջ, կը ներկայացնէ համագումար Ա. Ո. 39689. 13. 6

Ստիպուած ենք 1934 Դեկտ. 31 ին տրամադրելի գումարէն հնչուն դրամով պահել, որովհետեւ սահմանուած է Ձեռնարկներու եւ Հիմնարկութեանց,
.. 26076. 3. 3

Մնացորդը Ա. Ո. 13613. 10. 3

կը բաղկանայ գլխաւորաբար Դրամագումարներուն եւ մանաւանդ պահեստի Հիմնադրամներուն հնչուն պատրաստ գումարէն, ինչպէս նաեւ աւանդ բողոքուած գումարներէն:

Գ.— ՊԱՐՏԱԿԱՆ ՀԱՇԻՒՆԵՐ

ԶԱՆԱԶԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՆԵՐ

Զանազան պարտականներու հաշիւը կը պարունակէ գանձելի պահանջները որ կը բաղկանան՝

ա) Ընդհանուր, Մասնաւոր եւ Արտասովոր Հասոյքներու հաշուոյն պարտական գումարներէ՝ որ շրջան պայմանաժամին պիտի գանձուին Ա. Ո. 9013. 7. 6

բ) Երեւանի մէջ Բարեգործականի Տան կառուցման համար եղած փոխատուութենէն
.. 2550. 0. 0

գ) Պարտական ուրիշ հաշիւներէ
.. 409. 3. 3

որ կ'ամբողջացնեն Հաշուեկշիռին մէջ նշանակուած գումարը Ա. Ո. 11972. 10. 9

Գ. Մ Ա Ս

ԿՏԱԿՆԵՐ, ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.— ՆՈՐ ՀԻՄՆԱԳԻՐԱՄՆԵՐ

Այս գլխուն մէջ կ'ամփոփենք այն նոր կտակները եւ նուիրատուութիւնները զոր անցեալ տարի ստացած ենք, որպէս Մասնաւոր Հատոյթներ, եւ զոր արձանագրած ենք Մասն. Գրամագլուխի հաշուոյն իրբեւ առանձնապատուի հիմնադրամ: Ատոնց համադրումարն է Անգլ. Ոսկի 12616·16· 9:

1.— Միութեանս Գահիրէի վեթերան անդամներէն Տ. Յակոբճան Պօնճուզեան 8510·17· 7 անգլ. ոսկիի արժեթուղթեր նուիրեց, իր անունով, ինչպէս նաեւ ի յիշատակ իր ողբ. եղբոր Տ. Օհանիկ Պօնճուզեանի, որ արդէն մտադրած էր Միութեանս նուիրատուութիւն մը ընելու՝ երբ վաղահաս մահը արգելք եղաւ որ իրազործէր իր ցանկութիւնը:

Սոյն նուիրատուութիւնը եւս պայմանաւոր ըլլալով, ազնիւ նուիրատուին մահունէ վերջ Պօնճուզեան հիմնադրամին զուտ եկամտները պիտի յատկացուն, որոչ վճարումներէ զատ, գլխաւորաբար Ս. Էջմիածնայ եւ Կիլիկիոյ Կաթողիկոսարաններուն, ու Երուսաղէմի Պատրիարքարանին:

Այս առթիւ Տեարք Յակոբճան եւ Օհանիկ Պօնճուզեան Բարերար Անդամ նշանակուեցան, վերջինը յետ մահու:

2.— Միութեանս վաղեմի եւ հաւատաւոր անդամներէն Տ. Հեթում Աեթեան, որ անցեալին մէջ օգտաշատ գործունէութիւն մը զուտեցած է, Կ. Պոլիս գտնուած ատենը, կարեւոր նուիրատուութիւն մը ըրաւ Հ. Բ. Ը. Միութեան, պայմանաւ որ, յետ մահու, որոչ կենսաթոշակներէ եւ յատկացումներէ վերջ, զուտ եկամուտը գործածուի Հայաստանի մէջ Միութեան ձեռնարկներուն, իր անունով եւ իր յի-

շատակին: Սոյն հիմնադրամին արձանագրուած նուազագոյն արժէքն է անգլ. ոսկի 4758·14· 5:

Այս պայմանաւոր նուիրատուութեամբ Տ. Հ. Աեթեան եւս նշանակուեցաւ Բարերար Անդամ:

3.— Պոսթընի հոգեւոր հովիւ ողբ. Սորէն Մ. Վ. Լազարեանի կտակագրին համաձայն գանձեցինք Անգլ. ոսկի 1048· 5· 0, որպէս առանձին հիմնադրամ, զուտ եկամուտը յատկացուելու համար հայ լիզուի, պատմութեան եւ մատենագրութեան վերարեբեալ հին ձեռագիրներու կամ երկերու հրատարակութեան:

Ըստ Կանոնագրի, Գերյ. Լազարեան վարդապետ, որ Հ. Բ. Ը. Միութեան ջերմեռանդ անդամ մըն էր եւ նախագահը Նիւ Ինկլէնտի Շրջ. Յանձնախումբին, արձանագրուեցաւ յետ մահու Պատուոյ Անդամ:

4.— Լոնտոնէն Մ. Ա., որ արդէն Միութեանս յանձնած էր 1600 անգլ. ոսկի արժողութեամբ հիմնադրամ մը, Հայաստանի մէջ առողջապահական ձեռնարկի մը յատկացուելու համար, որոչ պայմաններու տակ, 1934ին անգլ. ոսկի 208· 4.— եւս յանձնեց:

5.— Օրէյնճէն (Մ. Ն.) ողբ. Անդրէաս Զօթեանի կտակին հաշուոյն գանձուած է 45 Անգլ. ոսկիի մասնավճար մը:

Մասնաւոր Դրամագլուխի վրայ բարդուած վերողբեալ հիմնադրամներու համադրումարն է Ա. Ո. 14571· 1.—, բայց ատոր փոխարէն յիշեալ Դրամագլուխին զեղչուած է Ա. Ո. 1954· 4· 3, որով ըստ թիւ 4 կցեալ հաշուեցոյցին զուտ գումարն է Ա. Ո. 12616·16· 9: Զեղչուած գումարը գոյացած է Մինաս Զերազի հիմնադրամին (Ա. Ո. 640·14· 4) Նուպարաչէնի հաշուոյն փոխանցումովը, Թագուհի Ճանիկեան հիմնադրամէն ըստ կտակի ժառանգորդներու Ա. Ո. 1269·15· 8 վճարումովը, եւ տոլարի սակի տարբերութեամբ Ա. Ո. 43·14· 3:

Քանի մը կտակի եւ նուիրատուութեան առաջարկներ եւս մեր նկատողութեան յանձնուած են, բայց տակաւին ի վիճակի չենք ատոնց մասին վճռականորէն խօսելու:

Բ.— ԶԱՆԱԶԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստորեւ կ'ամփոփենք այն կարեւորագոյն նուիրատուութիւնները զոր 1934ին ստացած ենք, ոչ թէ որպէս հիմնադրամ, այլ անմիջական

նպաստներու համար, ըստ սլարագայի արձանագրելով որպէս Ընդհ. Հասոյթ կամ Արտ. Հասոյթ:

1.— Բարերար Անդամ Տ. Գալուստ Կիւլպէնկեան անցեալ տարե- շրջանի համար եւս յանձնեց իր պաշտպանութեան տակ առած որբե- րուն դաստիարակութեան համար Անդլ. սոկի 600, ինչպէս նաեւ իր սովորական տարեվճարը Փր. 12.000, յօգուտ Աթէնքի եւ Սելանիկի կարօտեալներուն Փր. 5000 եւ Լիօնի հայերէնի դասընթացներուն Փրանք 2000:

2.— Գահիրէահիլ բնիկ Կեսարացի վաճառական Տեաք Կ. եւ Յ. Սարբեան, որ տարիներ առաջ Հայաստանի մէջ կառուցանելի նոր Կեսարիոյ հիմնաքարին համար Միութեանս նուիրած էին 24.18. 3 Անդլ. սոկի, անցեալ տարի 500 սոկիի գումար մը եւս յանձնեցին, նոր Կեսարիոյ մէջ զպրօցի մը կառուցման համար:

3.— Միութեանս Բարերար Անդամ ողբ. Մարգար Միրզայի կը- տակին համաձայն, զանձեցինք Միութեան երկու տարուան բաժինը Անդլ. սոկի 409.12.10, եւ այդ նպատաւորամբ յատկացուցինք Իզ- միրցի չքաւորներու, զրեթէ ամբողջովին Յունաստանի մէջ:

4.— Նանսէնեան Միջ. Օֆիսը անցեալ տարի եւս մեր տրամա- դրութեան տակ գրաւ 4000 Զուլից. Փրանքի նպատաւորամ մը (Ա. Ո. 272.13. 4), զոր ըստ համաձայնութեան յատկացուցինք կիսովին Սուրիոյ եւ Յունաստանի կարօտեալներուն:

5.— Նիւ Եորքէն ողբ. Սաչիկ Փափաղեան իր կեանքի ապահա- վազրութեամբը Միութեանս կտակած ըլլալով 1000 տուրք, այդ գու- մարը յատկացուցինք կրթական եւ երիտասարդական ձեռնարկներու:

6.— Միութեանս Բարերար Անդամ ողբ. Պատրիկ Կիւլպէնկեանի ժառանգորդները 1000 տուրք վճարած են անցեալ տարի, որբերու պաշտպանութեան իրրեւ վերջին մասնավճար:

7.— Միութեանս Նախագահ Զարեհ Պէյ Նուպար Երեւանի Բա- րեգործականի Տան շինութեան համար տրամադրած 3000 սոկիի վար- կի հաշտոյն վերագրածուած 1934ի տարեվճարը (Ա. Ո. 150) մեզի յանձնեց, նոր Եւրոպիոյ համար բեռնատար ինքնաշարժ կառք մը գնելու համար:

8.— Բարերար Անդամ Վահրամ Պէյ Նուպար մեր տրամադրու- թեան տակ գրաւ 10.000 Փրանքի (Ա. Ո. 133. 6. 8) բացառիկ վարկ մը, յօգուտ Բարիկ Մարի Նուպար Ուսանողական Տան կարօտ ուսա- նողներուն:

9.— Միութեան Արձաթեայ Յորելեանին առթիւ հրատարակելի Ոսկեմատեանին համար, Ազաթօն Պէյի կարգադրութեամբ Գարուհի Յակոբեանի հիմնադրամի պահեստէն 100 Անդլ. սոկի տրամադրուե- ցաւ, ինչպէս Մանչէսթըրէն Տ. Մարքո Պաքըճեան 50 սոկի նուիրեց նոյն նպատակին համար:

10.— Նիւ Եորքէն ողբ. Գասպար Կէօղլուրեանի կտակէն ստացանք տուրք 476.70 (Ա. Ո. 95. 6.10), յօգուտ Միութեանս ձեռնարկնե- րուն:

11.— Բնիկ Խարրերուցի (Եղէզի գիւղէն) ողբ. Պետրոս Տէր Պազ- տասարեան, որ անցեալ տարի մեռաւ Հալէպի մէջ, Միութեանս թո- գած է Անդլ. սոկի 97. 3.10: Յիշեալին կտակին համաձայն նախա- պէս գանձած էինք Ա. Ո. 85. 9. 3:

12.— Նիւ Եորքի Եւրոպիոյ Կրթ. Ընկերութեան ստացանք 1000 տուրք, նոր Եւրոպիոյ շինարարութեան համար:

Հարկ կը գատենք հոս ուղղել մեր նախորդ տարուան Տեղեկագրին մէջ սպրդած սխալ մը: Միութեանս Մանչէսթըրի (Ամերիկա) ան- դամներէն ողբ. Մ. Կարապետ Թիւթիւնճեանի կտակին համաձայն չէ որ 1933ին զանձեցինք 3500 տուրք, այլ Տ. Գրիգոր Թիւթիւնճեան էր որ սոյն նուիրատուութիւնը ըրաւ մեր Միութեան, իր եղբորը յիշա- տակին:

Գ.— ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1934ին չի ձեռնարկեցինք ու եւ է հանդանակութեան: Միայն Ներ- վաղթի հանդանակութիւնը շարունակուեցաւ, Հայաստանի Օգնու- թեան Կոմիտէի Ֆրանսայի Կեդր. Վարչութեան հետ կայացած հա- մաձայնութեամբ, երկու կազմակերպութեանց ներկայացուցիչներէն բաղկացած Կեդր. Յանձնախումբի մը ջանքերովը: Բաց աստի, հե- տեւեալ արգիւնքները կ'արձանագրենք:

1.— Նուպարաչէնի հանդանակութեան հիմնադրամին հաշտոյն արձանագրեցինք Անդլ. սոկի 3941. 9. 1ի զանձումները, որ կը ման- րամասնուին հետեւեալ կերպով.—

Նիւ Եորքի Համաբալուի Համագործակցական Միութե- նէն Նոր Բալուի համար (Տոլար 1500)	Ա. Ո. 300.—.—
Փաստաինայի Հաննոյ Հայրենակցական Միութենէն Նոր Հանընի համար (Տոլար 1000)	200.—.—
Հէյվըրհիլի հուլյու - Թլկատինի վերաշինացէն Նոր Թլկատինի համար (Տոլար 3125)	625.—.—
Լօվէլի Քէօրքէ Գիւղի Կրթ. Ընկերութենէն Շէնքի մը համար (Տոլար 1250)	250.—.—
Ողբ. Տիրայր Ծ. Վ. Մարգարեանի կտակադրամէն	547.14. 0
Ողբ. Մինաս Զերագի հիմնադրամը	753. 2. 5
Ողբ. Գ. Սարգիսեանի, Մ. Սամուէլեանի եւ Մ. Սեւոյ- եանի հիմնադրամներու եկամուտները	741. 4. 4
Հանգանակութեան հաշւոյն յանձնուած զանազան գու- մարներ	466. 0.11
Տոլարի սակի տարբերութիւն	58. 7. 5

ԳՈՒՄԱՐ Ա. Ո. 3941. 9. 1

2.— Միութեանս Ներգաղթի հիմնադրամին համար նախորդ տարուան ընթացքին հանդանակուած գումարը, Ա. Ո. 199. 2.— :

3.— Ոսկեզէն Կիրակիի որբանդաստ նուիրահաւաքութիւնը 1934ին արտա-
դրած է 1152. 2.11 Անգլ. ոսկիի համագումար մը, յօդուտ Միու-
թեանս կրթական ձեռնարկներուն : Այդ գումարին մեծագոյն մասը
հանգանակուած է Եգիպտոսի մէջ (Ա. Ո. 593.13. 8) :

Գ. Մ Ա Ս

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆՊԱՍՏՆԵՐ

Այս գլուխին մէջ կ'ամփոփենք Միութեանս օգնութեան ձեռնարկ-
ները եւ զանազան վարկերն ու նպաստները, դասաւորելով եօթը ստո-
րաբաժանումներու մէջ. — Հայաստանի ձեռնարկներ, Որբեր, Կրթա-
կան Հաստատութիւններ, Մշակութային ձեռնարկներ, Առողջապա-
հական ձեռնարկներ, Պատրիարքարաններու վարկեր եւ Գաղթական-
ներու Օգնութիւն :

Ինչպէս որ մատնանշուած է թիւ 2 հաշուեցոյցին եւ մանրամաս-
նուած թիւ 6 կցեալին մէջ, 1934ին Օգնութեան մարգերուն համար
ծախսուած ընդհանուր գումարն է Անգլ. ոսկի 33023.16. 9 :

Ա.— ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

1.— ՆԵՐԳԱՂԹ

Անցեալ տարեշրջանի ընթացքին շարունակեցինք հետապնդել
Ներգաղթի կենսական ծրագիրը, բայց հակառակ մեր բաղմաբիմի
գիծումներուն Հայաստանի Կառավարութիւնը չի կրցաւ նոր գաղթա-
կաններ ընդունիլ, միշտ բնակարաններու չգոյութեան պատճառաւ :

Այս մասին 1934ի սկիզբը Երեւանէն մեզի հաղորդուեցաւ հետեւ-
եալ զեկուցումը. —

« Հակառակ Կառավարութեան խոստման եւ ցանկութեան, դըժ-
բախտաբար կարելի չպիտի լինի այս գարնան ներգաղթի սկսել, որով-
հետեւ մի շարք կենսական կարեւորութիւն ունեցող ձեռնարկներ,
գլխաւորաբար սենթեսիք կաուչուկ կոմպլինատի հսկայական կաու-
ցումը, ուր 150 բաժանմունք պիտի ընդունին կարեւոր թուով աշխա-
տաւորներ, ինչպէս նաեւ մի կարգ Հայրենակցականների շինարարու-
թիւնները, մասնաւորապէս Նուպարաշէնը, հազիւ պատրաստ կը լի-
նին առաջիկայ աշնան : Իրաց այս վիճակին մէջ որոշուած է ուրեմն

ներգաղթի ձեռնարկել յառաջիկայ աշնան միայն, երբ քաղ. Շահ-վերդեան կը մեկնի արտասահման: Թէեւ այս յետաձգումը ցաւալի է, բայց Կառավարութեան ցանկութիւնն է որ մեր արտասահմանահայրենակիցները փոխադրութիւնը կատարուի լուազոյն պայմաններէ մէջ »:

Անտարակոյս այս յտակ վեկուցումը ներգաղթի կարճատեւ յետաձգումը միայն կը ծանուցանէր, լրացնելու համար այն հիմնական աշխատանքները որ թոյլ պիտի տան լուազոյն պայմաններու մէջ կատարելու ներգաղթը: Բայց մենք պարտականութիւն համարեցինք հանրութեան առջեւ դնել հարցը այնպէս ինչպէս Հայաստանի Կառավարութիւնը, իր բարեացակամութեան միացնելով իմաստութիւնը, յարմարագոյն դատած էր կարգադրել, որպէսզի անմիջական ներգաղթի մը խանդավառութեամբը մեր հայրենակիցները աճապարելով յուսախարութեանց չենթարկուին, իրենց պատրաստութեանց մէջ անհարկի աճապարանք մը դնելով:

Վստահ թէ Հայաստանի ղեկավար շրջանակները առաջին պատեհութեամբ իսկ պիտի փութան վերակսիլ ներգաղթի գործողութեանց, տարբեր ուղղութեամբ ալ դիմումներ կատարեցինք, Ժընէվի մէջ, Խորհրդային Միութեան պատուիրակներուն մօտ, որպէսզի Մուկուայի մէջ կարելիութիւններ ստեղծուին ներգաղթի մասին, ինչպէս նաեւ Նանսէնեան Միջազգ. Օֆիսին մօտ, որուն նոր բանաձեւով մը յանձնարարուած էր Արգենտինայի Բնակչութեան Ընդհ. Ժողովին կողմէ՝ հայ դաղթականներու Հայաստան փոխադրումի ձեռնարկը յաջողցնելու միջոցներ դնել: Յետագային մեզի հաղորդուեցաւ թէ Ժընէվի Խորհրդային Պատուիրակները յայտարարած են թէ Խ. Միութեան կեդր. Կառավարութիւնը սկզբունքով համամիտ է Հայերու Խ. Հայաստան ներգաղթին, բայց չի կրնար նիւթական օժանդակութիւն ընծայել: Այդ խորհրդակցութեանց առթիւ Յունաստանի պատուիրակ Մ. Ռաֆայէլ ուշագրաւ արդարարութիւն մը ըրած է, թէ « ինչ որ ալ ըլլայ, Հայերուն համար լուազոյն արտասահմանը իրենց հայրենիքն է, եւ պէտք է ընդունիլ որ ներգաղթի խնդիրը իրենց համար անհատական յարմարութեան գործ մը չի կրնար ըլլալ »:

Թէեւ զրոյցներ շրջան ըրին թէ Հայաստանէն փախչելով Պարսկաստան եւ Սուրիա արտասահման խումբ մը ներգաղթողներ անպատասեղեկութիւններ կը հաղորդէին մասնաւորաբար հայ դաղթականներու կարօտութեանց մասին, սակայն կրցանք ստուգել թէ հայրենիքի այդ դասակիցները բաղաատարար շատ փոքր թիւ մը կը ներկա-

յացնեն, թէ ցաւալի է որ անոնք չեն կրցած համակերպիլ իրենց հայրենիքի վերաշինութեան աշխատանքներուն որ կը պահանջեն բարի կամեցողութիւն եւ գոհացութեան ոգի, թէ նմանօրինակ ամէն հոծ տեղափոխումներու միջոցին անխուսափելի են այդպիսի աննշան խտտումները, եւ թէ արդէն այդ գոհո՛հ փախտականներէն ոմանք զըջում յայտնելով կրկին Հայաստան վերադարձած են: Իրականին մէջ, վերջին տարիներու ընթացքին ներգաղթողներու ստուարագոյն մասը, հայրենասիրական աւելի խոր գիտակցութեամբ մը, հաստատակամօրէն եւ սրտեռանդ լծուած է իր պարտականութեանց եւ գոհ է ընդհանրապէս իր վիճակէն, վաղուան հեռագատեղերնորով աւելի եւս գօտեպնդուած:

Հեռեւտղական ըլլալով Միութեանս ընդգրկած ուղղութեան, եւ նկատի առնելով անտեսական տաղնապին հետեւանքով հետզհետէ չեչտուող գործադրութիւնը, մասնաւորապէս Ֆրանսայի մէջ, եւ հարաւոր կարօտ հայրենակիցներու համար ներգաղթի ստիպողականութիւնը, վերջերս Հայաստանի նորընտիր Վարչապետ Ա. Գուլոյեանի եւս սրտազին դիմում մը կատարեց մեր Նախագահը, պարզելով հայ անգործներու յոյժ անբաղձալի կացութիւնը, որ օտարականներու դէմ գործադրուած նոր օրէնքներու պատճառաւ աւելի եւս զրժուարացած է:

Ուրախ ենք յայտնելու որ ներկայ Տեղեկագրին պատրաստութեան վերջին օրերուն իսկ, Երեւանէն պաշտօնական հեռագիրներ հաղորդեցին թէ Կառավարութիւնը որոշած է Ֆրանսայէն 1200 գործազուրկուած աշխատաւորներ ընդունիլ, եւ թէ այդ գործը զլուի հանելու համար Ֆրանսա կ'ուղեւորի ներգաղթի լիտոր քաղ. Գ. Շահվերդեան: Ըստ ղեկուցման, նախապատուութիւնը պիտի տրուի այն Հայրենակցականներու կողմէ յանձնարարուած դաղթականներուն որ Հայաստանի մէջ աւան կամ նուպարաչէնի մէջ թաղամաս կառուցած են:

Անշուշտ այս բարեգէտ որոշումը մասամբ ամօքում մը յառաջ պիտի բերէ, եւ հաւանօրէն նախաքայլն է յառաջիկայ խումբերու ալ կազմութեան, ուրիշ երկիրներէ եւս:

Յայտնի է թէ, ինչպէս որ Հ. Բ. Ը. Միութիւնը առաջինը եղաւ դաղութահայ աւան մը կառուցանելու Հայաստանի մէջ, Նոր Եւզոկիան, նոյնպէս ալ առաջին անգամ ան գործադրեց ներգաղթի ծրագիրը, 1924ին, Հայաստան փոխադրելով իր Երուսաղէմի Որբանոցներէն 250 որբեր, կառավարութեան ընելով 25,000 տուարի հատուցում մը, անոնց տեղաւորման համար:

Յետագային, այսինքն 1925ին, 1927ին և 1932ին, յաջորդաբար տեղի ունեցող ներգաղթի գործողութեանց ևս **Հ. Բ. Ը. Միութիւնը** բերաւ իր ամենալայն աջակցութիւնը, դրամական օժանդակութեան տեսակէտով միակը ըլլալով մեր ազգային կազմակերպութեանց մէջ: Արդարեւ, անկիւ կրցաւ հողալ շուրջ 15,000 հայրենակիցներու ներգաղթի ծախքերը, աւելի քան 20,000 անգլ. ոսկի, և յառաջիկային ալ երբ կրկին ձեռնարկուի ներգաղթի, աներկրայօրէն պիտի փութայ իր բոլոր պարտականութիւնը կատարել, չքաւոր գաղթականներու փոխադրութիւնը ապահովելով:

Նուպարաչէնը ևս, որ տիպար զիւղաքաղաքի մը նշանակութեամբ կը կանգնի, և որուն համար մեր Միութիւնը ցարդ 80,000 Անգլ. ոսկիի դամար մը ծախսած է, կենդանի ձեռնարկ մըն է սերտօրէն կապուած ներգաղթին, քանի որ կատուցուած հարիւրաւոր բնակարաններուն մէջ պիտի տեղաւորուին բազմաթիւ ներգաղթող աշխատաւորներ:

Այս իրողութիւնները, թուանշաններու և թուականներու յտակ լոյսին տակ, անհերքելիօրէն ցոյց կուտան թէ՛ **Հ. Բ. Ը. Միութիւնը** ներգաղթը ազգապահպանումի և հայրենաշինութեան իր ծրագրին անբաժան կարեւորագոյն ձեռնարկը կը նկատէ:

Այս նկատողութեամբ էր նաեւ որ, հակառակ տիրող յոռետեսութեան, մէկ ու կէս տարի առաջ, քաղաքացի Գ. Վարդանեանի խանդավառ հրաւերին վրայ, **Հ. Բ. Ը. Միութիւնը** իր ջանքերը միացուց Հայաստանի Օգնութեան Կոմիտէի ջանքերուն, թէև ցաւալի է խոստովանիլ որ ներգաղթի և բնակարանի փոխի հանգանակութիւնը, բազմամամբ գործին բացառիկ կարեւորութեան, ցայսօր դոհացուցիչ արդիւնք մը չէ տուած:

Սոյն Հանգանակիչ Կեդր. Յանձնաժողովը, որուն Նախագահն է Զարեհ Պէյ Նուպար, փոխ - Նախագահը Տ. Աւետիք Իսահակեան և Փանձապահը Տ. Լեւոն Կիւմրիչկերտան, անցեալ տարի 1000 Անգլ. ոսկիի դամար մը յանձնած ըլլալով Երեւանի Կառավարութեան, յատկացուելու համար ներգաղթողներու բնակարանի շինութեան պետական հիմնադրամին, մեր Միութեան կողմէ սոյն դամարը կրկնապատկուեցաւ 1000 ոսկիի առաքումով:

2.— ՆՈՒՊԱՐԱՇԷՆ

Անցեալ տարի ևս յառաջ տարուեցան Նուպարաչէնի շինարարական աշխատութիւնները, ընդ հսկողութեամբ Շին. Յանձնաժողովի, և վարչութեամբ քաղ. Լեւոն Արապեանի որ սրտեօտեմբ այդ գործին նուիրուած է տեղւոյն վրայ:

Մեծ աւանի մը, գրեթէ զիւղաքաղաքի մը շինութիւնը այնքան բարդ է ըստ ինքեան, երբ մանաւանդ որոշուած է օժտել անկիւ արդիական բոլոր պահանջներով, որ անոր ընդարձակումը և բարդաւածումը ստուգիւ տարիներու կը կարօտի: Այսուհանդերձ, պէտք է խոստովանիլ թէ Նուպարաչէն արդէն զեղեցիկ իրականութիւն մըն է, եր 5 - 600 բնակիչներով ու զօրծարաններով, և մինչև յառաջիկայ ձմեռ իր ծոցին մէջ ընդունելով նոր ներգաղթողներ՝ պիտի դառնայ Հայրենակցական աւաններու իսկապէս մեծագոյնը և կարեւորագոյնը, ինչպէս որ Կառավարութիւնը որոշած է առաջին օրէն իսկ:

1934ի դարնան ստացուած տեղեկագրէ մը կը քաղենք հետեւեալ հատուածը որ ինքզինքը կը բացատրէ. —

« Նուպարաչէնի շինարարութիւնը, դարնան հետ, սկսաւ մեծ թափով յառաջ գնալ: Նախագահ Տէր Գարրիկէան որ միշտ հոգածու է այս նոր աւանի ապագայով, ոչ միայն անձամբ այցելում է, այլ և կարգադրած է որ Հայաստանի մեծագոյն հիմնարկներից Հայմատառին (Հայաստանի շինանիւթ մատակարարող) տնօրէնը քաղ. Բարսեմանօֆ՝ իր բարոյապէս պատասխանատու՝ անձնապէս հսկէ Նուպարաչէնի շինարարութեան և մատակարարէ հարկ եղած շինանիւթը: Այնպէս որ, ներկայ տարուան շրջանին նուազագոյն 50 բնակարանների շինութիւնը և նախկին շինութիւնների բարեգարգումը անկասկած է:

« Նուպարաչէնի նոր խճուղին վերջացաւ և մեծ զիւրութիւն ստեղծեց երթեւեկութեան:

« Հացահատիկի և զանազան արմտիքի դարնանացանքը նոյնպէս վերջացաւ, մի քանի հեքտար ցանքս կատարուած է:

« Ստացանք կղմինտրի քաթալոկները: Կառավարութիւնը մասնաւոր հետաքրքրութիւն է ցոյց տալիս և զիմած է մի կարգ մասնագէտների, որպէսզի լուրջ ուսումնասիրութիւնից յետոյ, եթէ յարմար դատուի, կառուցուի ծրագրուած գործարանը, որ ոչ միայն Նուպարաչէնի կարիքներուն պիտի բաւարարի, այլ ամբողջ Հայաստանի »:

Լաւազոյն կը սեպենք նոյնութեամբ արտադրել Նուարաչէնի Շին. Յանձնաժողովին և ժողկոմխորհի Գործ. Կառավարիչին կողմէ ստորագրուած տեղեկագիրը, որ հետեւեալ կերպով կ'ամփոփէ 1934ին կատարուած և կատարուելիք աշխատութիւնները. —

« Նուարաչէնի աշխատանքները աշխուժացնելու համար, ժողկոմխորհի կարգադրութեամբ ստեղծուեց մի առանձին մարմին « Նուարաչէնի Կոմխոէ » անուամբ, նախագահութեամբ ժողկոմխորհի նախագահի Տեղակալ ընկեր Յ. Երզնկեանի և անդամակցութեամբ ընկերներ՝ Դ. Շահվերդեանի, Հ. Եազուբեանի, Հ. Գարակէօղեանի, Լ. Արարեանի, Ա. Տէր Յովհաննիսեանի և ճարտարապետ Ա. Թամանեանի:

« Կոմխոէն նշանակեց մի քննիչ Յանձնախումբ, նախագահութեամբ ճարտարապետ Բայկի, որ, մանրամասն քննութիւնից յետոյ, ներկայացրեց իր տեղեկագիրը շինարարութեան վիճակի մասին, մասնաձեւերով նրա զրական, ինչպէս բացասական կողմերը:

« Այնուհետեւ Կոմխոէն շինարարութեան վերահսկողութիւնը և ղեկավարութիւնը յանձնեց ընկ. Լ. Արարեանի, որի կատարած աշխատանքը պէտք է համարել զոհացուցիչ:

« Գլխաւոր խնդիրն էր զարդի և զարդի զործարանի շինութիւնը: Առաջին հերթին կառուցուցին այդ երկու կարեւոր հիմնարկները: Կրտստ մնացած շէնքերի աւարտումից յետոյ, որոշ չափով լուծուեց բնակարանային հարցը: Իւրաքանչիւր ընտանիքի յատկացեց մի առանձին բնակարան, իր յարմարութիւններով:

« Յետոյ ձեռնարկուեց Հայրենակցական Միութիւնների թաղամասերի կառուցման:

« Մնում են միայն ստաղծագործական աշխատանքները, որոնք կատարուում են ներկայումս ձմեռուայ ընթացքում:

« Նուբարաչէնը դարձել է արդէն մի փոքրիկ աւան 42 շէնքերով և 168 բնակարաններով: Իսկ ինչ վերաբերում է ընդհ. բնակչութեան, թիւն է 395 զաղթական, 29 ծառայող, 33 զանազան քաղաքներէ:

« Նախ քան Կուբորաչինի կողմից շինարարութեան փոխանցումը Նուբարաչէնի Կոմխոէին, բնակիչները տանում էին իրենց աօրեւայ ջուրը անկանոն կերպով: Այժմ, շնորհիւ 7 քիլոմետրի վրայ ջրմուղ անցկացնելու համար նախապէս կատարուած հարաւածային աշխատանքին, ջրի խնդիրը կարգադրուած է այնպէս որ բնակչութիւնը լիովին բաւարարուած է իր պէտքերը:

« Բացի այս աշխատանքից, Նուբարաչէնի կենդանիների համար կառուցուեց մի նոր գումակ, որ պատասխարում են ու կերակրում 60 կովեր և եղներ: Ճրկ կարուսնով և կոյ պաղթականներին ժողկոմխորհը նւիրեց 110 կիթան այծ և ոչխար, որոնք պատասխարում են մի այլ գումակով և մատակարարում յիշեալ բնտանիքներին կաթ: Նախորդ Յունաստանից ներգաղթած և Նուբարաչէնում հաստատուած ընտանիքները նւնին նոյնպէս կաթնատու այծեր և ոչխարներ:

« Նուբարաչէնի համար կարեւորագոյն հարցերից մէկն է Երեւանի հետ կարճ հաղորդակցութիւնը: Ներկայ ճանապարհը Երեւանից մինչեւ Նուբարաչէն 25 քիլոմետր է: Այս ճանապարհը թէ՛ շինանիւթերի փոխադրութեան և թէ՛ բնակչութեան երթեւեկի տեսակէտով ներկայացնում է խոշոր ծախսեր և անպատեհութիւններ: Հետեւաբար, Նուբարաչէնի Կոմխոէի որոշումով ձեռնարկուեց մի նոր խճուղիի շինութեան, որի երկարութիւնն է 8 քիլոմետր: Այս ճանապարհի մեծ մասը, մօտաւորապէս 5 քիլոմետր, արդէն աւարտած է և աշխատանքները, հակառակ ձմեռուայ եղանակին, շարունակուում են: Մինչեւ դարուն նա բոլորովին պատրաստ կը լինի:

« Լուծուելու վրայ է մի այլ խոշոր խնդիր. Նուբարաչէնը պատկ ելեքարական ցանցով: Աշխատանքները ստաղ են տարուում և մինչեւ դարուն Նուբարաչէնը կ'ունենայ իր ելեքարական բոլոր:

« Նուբարաչէնի բնակչութիւնը հետզհետէ կապուում է արտադրական ներուժ աշխատանքի, բաւարարելով ոչ միայն իր սեփական կարիքներին, այլ և արտահանելով իր արտադրանքը Երեւան: Արդէն զործում է զարդի զործարանը, մեխանիքական արհեստանոցը և մեխանիքական սղոցարանը: Շուտով կը բացուի կոշիկի մի արտել՝ բաղկացած Պուրկարիայից և Յունաստանից ներգաղթած երիտասարդ կոշկակարներից:

« Շնորհիւ Ղաերի ջրանցքի կառուցման, նաև հնարաւոր եղաւ կատարել այս տարի 100 հեքտար հացահատիկի աշնանացան: Ի հարկէ կ'ունենանք և մեր զարնանացանը: Նուբարաչէնին Կառավարութեան կողմից յատկացուած է 3 այգի, որի կողքին կ'ունենանք բանջարանոց:

« Ինչ վերաբերում է զանազան հիմնադրամներով Նուբարաչէնում կառուցուելիք հաստատութիւններին, օրինակ՝ Մինաս Չերազ, Սարգսեան, ևւն. յատկացումները, նրանց յատկազօրմանը յանձնարարուած են արդէն և շինութեան կը ձեռնարկուի յառաջիկայ զարնան:

« Վերջացնելուց ստաղ, հարկ ենք համարում յայտնելու թէ բո-

լոր միջոցները ձեռք են առնւած, սրպէսպի դարնան մեծ թափով առաջ տարւի Նուբարաշէնի շինարարութիւնը » :

Երևանէն հարցրդուած վերջնագոյն յատակագիծը ցոյց կուտայ Նուբարաշէնի մէջ ցարդ կատարուած շինարարութեանց պատկերը : Մինչև ցարդ կատարուած են 44 շէնքեր չորսական եւ 16 շէնքեր եւս ութական բնակարաններով : Իւրաքանչիւր բնակարան կը բաղկանայ 2 սենեակէ, խոհանոցէ, պատշգամէ եւ նկուղէ : Այսինքն ընդամէնը 300 բնակարան կամ 600 սենեակ, բոլոր յարմարութիւններով : Նուբարաշէնի Վարժարանը կատարուած ըլլալով Միութեան Նիւ Եորքի Տիկնանց Յանձնախումբին տրամադրած 15,000 տոլարով, արդէն կը ծառայէ իր նպատակին, 126 երկսեռ աշակերտներով : Գորգի եւ կօշիկի գործարանները կ'աշխատին : Նոյնպէս լրացած են Հայրենակցական թաղամասերը՝ Նոր Հապուսի, Նոր Թլկատին, Նոր Բալու, Նոր Չնքուշ, Նոր Ակն եւ Նոր Հաճըն : Ներկայ տարուան գարունէն սկսեալ յառաջ կը տարուին մասնաւորապէս բարեկարգումի աշխատանքը, փողոցներու սալաշտտակումը, ծառերու շարքաւորումը եւ հանրային շէնքերու կատարումը, եւ մասնաւորապէս էլեքտրական լոյսի ընդհանուր սարքաւորումը :

Կառավարութեան վերջին պաշտօնագրին մէջ կը կրկնուի թէ՛ Նուբարաշէնը, իր ներկայ բնակչութեամբ ու զէրքով, « մեր ապագայում պիտի դառնայ մի կենդանի եւ օրինակելի աւան, տնտեսական եւ կուլտուրական մեծ հեռանկարով » :

Անկեղծ հաճոյքով կ'արձանագրենք որ Նիւ Եորքի մէջ Միութեան Ծրջ. Յանձնաժողովին եւ Համա-Բալուի Վերաշինաց Համագործակցականի միջեւ կայացած համաձայնութեան վրայ, Նուբարաշէնի մէջ անցեալ տարի կատարուեցաւ Նոր Բալու թաղամասը, 32 բնակարաններով, իւրաքանչիւրը երկու սենեակ, խոհանոց, նկուղ, պարտէզ, եւն. : Յիշեալ Ընկերութիւնը առ այդ վճարեց 6250 տոլար : Ուրիշ Հայրենակցականներ ալ առաջարկներ ըրած են մեր Միութեան հետ գործակցարար Նուբարաշէնի մէջ յատուկ թաղամասեր կամ շէնքեր կատարելու համար, որոնց մէկ մասը վերջերս արդէն համաձայնութեան յանգած են : Ասոնցմէ գլխաւորաբար յիշատակենք Քէօօրբէ Գիւղի, Բալուի Խօշմաթ Գիւղի, Չմշկածաղի Հայրենակցականները, որոնց անունով մասնաւոր շէնքեր պիտի կատարուին Նուբարաշէնի մէջ : Կը ցաւինք սակայն յայտնելու որ Ակնայ Հայրենակցականը ցարդ շատ աննշան գումար մը միայն տրամադրած ըլլալով, հարկադրուեցանք Նոր Ակն թաղամասը յատկացնել Հայրենակցականներու

եւ անհասանելու կողմէ կատարուած եւ կատարուելիք շէնքերուն, մէջն ըլլալով Ակնայ Հայրենակցականի շէնքը : Ինչպէս յայտնի է, մէն մի բնակարանի կատարման գին նշանակած ենք 1250 տոլար, մեր կողմէ կրկնապատկումի խոստումով :

Շեշտելու համար Նուբարաշէնի բացասիկ կարեւորութիւնը, Կառավարութեան բարեհաճ տնօրինութեամբ անջատուելով Ղամարլուէ որուն մաս կը կաղմէր, Նուբարաշէն կցուած է Երևան քաղաքին, եւ Քաղաքախորհուրդը այդ միացման առթիւ իր ներկայ տարուան պիւտձէին մէջ յատուկ վարկ մը բացած է :

Նախագահ Տէր Գարբիէլեան իր վերջին այցելութեան առթիւ Նուբարաշէնի բնակչութեան տրամադրած է զոյգ թրաքթօր :

1934ին ցանքի արդիւնքը եղած է 400 թօն հացահատիկ եւ 50 թօն դարի, ինչպէս նաեւ բազմատեսակ բանջարեղէն եւ մրգեղէն :

Անցեալ տարուան ընթացքին Նուբարաշէնի հաշուոյն դրամով ու ապրանքով կատարուած վճարումներն ալ մէջը ըլլալով, սկիզբէն ցվերջ 1934 Միութեանս կողմէ տրամադրուած համագումարն է Անգլ. սսկի 74096.14. 6 :

3.— ՆՈՐ ԵՒԳՈԿԻՍ

Գաղութնայ սոյն աւանը, որուն կատարումը կըրցանք ապահովել յօդուած Թոքատի Միութեանս վստահուած Մէօթէմէտեան կտակագրածի զիջուած եկամուտներովը, թէեւ գանդաղօրէն, բայց հետզհետէ կ'ընդարձակուի : Կը ցաւինք որ հակառակ մեր բաղմազան դիմումներուն, Թոքատցի ունեւորներու կողմէ մեզի չընծայուեցաւ պէտք եղած օժանդակութիւնը որ կարենայինք գոհացում տալ Նոր Եւգոկիոյ կարիքներուն : Ուրախ ենք սակայն յայտնելու որ Նիւ Եորքէն Թոքատի Կրթասիրաց Ընկերութիւնը մեր տրամադրութեան տակ Գրաւ 1000 տոլարի գումար մը, որ պիտի օգտագործուի Նոր Եւգոկիոյ շինարարութեան :

Նոր Եւգոկիոյ Ծին. Յանձնաժողովին վերջին տեղեկագրէն կը քաղենք հետեւեալ թելադրական տողերը. —

« Մեր աւանը, Վաղարշապատի մօտ, վերջին տարիներս օր ըստ օրի աճում է՝ յատկապէս զիւղատնտեսական մշակոյթները զարգացնելու հնարաւորութիւնների գործում : Մենք ունենք աւանի մօտ բանջարանոցներ, նորատունի պարտէզներ, որոնք ջրում են կանոնաւոր ջրանցքներով :

« Վաղարշապատի ելերտրական կայանից անցկացում գծով մեր բոլոր բնակարանները լուսավորում են ելերտրական լույսով: Մեր աւանում բնակչութիւնն աճում է, բայց հնարաւորութիւն չունենք արագ թափով նոր բնակարաններ շինելու, որի հետեւանքով առաջանում է բնակարանային սրտչ նեղւածք:

« Այսօր կառուցւած եւ բնակեցրած է 17 տուն, որոնց մէջ ապրում են 35 տնտեսութիւններ կամ 150 շունչ: 4 տուն էլ կիսաշէն ապաստում են նիւթական օգնութեան որ վերջանան:

« Ծնորհակալութիւն ձեր ուղարկած 100 սսկու համար, որը անշուշտ կ'օգնի մեր պահանները լրացումին, մեր շինարարական ասպարէզում: Խնդրում ենք ըստ հնարաւորութեան աւելի քան աջակցել մեր աշխատանքներին, որով մենք եւս հնարաւորութիւն կ'ունենանք բաւարարելու դաղթականութեան կուրտուրական եւ տնտեսական պահանջներին:

« Մի խնդիր եւս ունինք ձեզանից, այն է, որ Նոր Եւզոկիան 20 քիլոմետր հեռու լինելով Երեւանից, շինանիւթերի եւ այլ կարիքների փոխադրութեան համար մեծ նեղութիւններ ենք կրում, ուստի խընդրում ենք եթէ հնարաւոր է ուղարկէք մեզ մի ապրանքատար Ծորդ սիսթէմի ալտոմեքենայ, որով աղատած կը լինէք մեզ ամէն տեսակ անյարմարութիւններից եւ կը նպաստէք մեր աւանի բարգաւաճմանը»:

Նոր Եւզոկիայ այդ պէտքին ալ կարելի եղաւ գոհացում տալ, չընորհիւ մեր Նախագահ Զարեհ Պէյ Նուպարի բարեացակամութեան: Արդարեւ Երեւանի Բարեգործականի Տան համար իր տրամադրած վարկի հաշւոյն վերադարձուած տարեվճարը յատկացուց ինքնաշարժ բեռնատար կառքի մը, զոր Նոր Եւզոկիա զրկեցինք վերջերս, ընդհանուր ծախքը եղաւ 162 Անդլ. սսկի, որուն 150 սսկին կ'երեւայ անցեալ տարուան հաշիւներուն մէջ: Բաց աստի, 100 սսկիի գումար մը եւս զրկեցինք շինարարութեան համար, Մէօթէմէտեան կտակի եկամուտէն:

4— ՀԱՄԱԿԱՐԱՆ ԵՒ ՄԵԼԳՈՆԵԱՆ ՎԱՐԿ

Երեւանի Մելգոնեան Փոնտի Գործադիր Յանձնաժողովը, որ կը յանձնաձէ Միութեանս կողմէ Պետ. Համալսարանին տրամադրուած տարեկան 3000 Եգիպտ. սսկիի վարկը, 1934 տարուան ընթացքին շարունակեց իր գործունէութիւնը:

Յանձնաժողովը թէ՛ արտասահմանէն եւ թէ՛ Խ. Միութեան եր-

կիրներէն հաւաքեց եւրոպական եւ արեւելեան լեզուներով հայազրատական եւ կովկասագլխատական մեծարժէք գիրքեր: Այս հաւաքածոն մինչեւ 19րդ դար գրեթէ լրիւ է:

Յանձնաժողովը շարունակեց նաեւ հաւաքել մեծած հայ բանասէրներու թողած անտիպ աշխատութիւնները: Լալանանի, Աղանեանի եւ ուրիշներու ամբողջ ձեռագիրները արդէն բերուած էին նախորդ տարի: 1934ին գնուեցան Ալեքսանդր Մխիթարեանի ձեռագիրները, որ արժէքաւոր նիւթեր կը պարունակեն Շիրակի անցեալ դարու պատմութեան եւ աղագրութեան համար: Յանձնաժողովը անհասանելի գնած է նաեւ 22 հին հայ գրչագիրներ:

Նախորդ տարի ծրագրուած էր կազմակերպել բաժնետիրական ընկերութիւն մը, մասնակցութեամբ Մելգոնեան Յանձնաժողովին, հիմնելու համար տպարան մը գիտական հրատարակութեանց համար: Նիւթական միջոցներու չզոյսութեան պատճառաւ, Մելգոնեան Յանձնաժողովն է որ ստանձնեց տպարանի հիմնարկութեան ամբողջ գործը, եւ ստացաւ հարկ եղած տպագրական մեքենաներն ու կազմածները: Տպարանը պիտի յորջորջուի Լուսժողովատի « Գիտական Հրատարակչական Տպարան » եւ պիտի տպագրէ նախ Մելգոնեան Փոնտի հրատարակութիւնները եւ ապա Պետական Համալսարանի, Հայաստանի պատմութեան եւ զրականութեան Ինստիտուտի, Միութեանական Ակադեմիայի Հայաստանի ճիւղին եւ այլ գիտական հիմնարկներու ուսումնասիրութիւնները, միշտ նախապատուութիւն տալով հայազրատական եւ կովկասագլխատական ուսումնասիրութեանց:

Յանձնաժողովը, այս տարի եւս, կապ պահեց հայ լեզուի, պատմութեան, զրականութեան, արուեստի եւ այլ հայազրատական մարդերուն մէջ աշխատող գիտական աշխատաւորներու հետ եւ հնարաւոր նիւթական միջոցներ տրամադրեց ուսումնասիրութեանց համար, իր ուշադրութիւնը կեդրոնացնելով մասնաւորապէս մեր անցեալ մշակութի սկզբնաղբիւրներու հաւաքման եւ հրատարակութեան:

1934ին լոյս տեսան Բրոֆ. Արեղեանի « Հայոց լեզուի Տաղաչափութիւնը », ճարտարապետ Բունիաթեանի « Գառնիի Հեթանոսական Տաճարը », Բրոֆ. Խաչատրեանի « Հայաստանի սեպ. շրջանի Պատմութիւն »-ը, Բրոֆ. Յակոբեանի « Ուղեգրութիւններ »-ու Զ. հատորը, Զ. Կորկոտեանի « Խ. Հայաստանի աղագրականութիւնը », Բրոֆ. Մանանդեանի « Երատոսթէնիտի Ստադիոնը » եւ « Ֆէոտոլիամբ հին Հայաստանում », ընդամէնը Եօթը հատոր: Նախապէս լոյս տեսած է ստանդիւլ հատոր:

Մինչև 1935 թ. վերջը, ըստ կը տեսնեն մօտաւորապէս 17 հատորներ եւս: Ասոնցմէ զատ, Յանձնաժողովը տպագրութեան համար պատրաստ ունի նաև 15 աշխատութիւն:

Յանձնաժողովը էր տրամադրութեան տակ ունի նաև 26 հատոր դաւաճագլխաւիան բառարաններու բնագիրները կամ լուսանկարները, որոնցմով Բրոֆ. Աճառեան պիտի պատրաստէ հայերէն բարբառներու բառարան մը, երեք տարուան ընթացքին:

Յանձնաժողովը էր ձեռքին տակ ունի նաև 28 պատրաստ ձևագիրներ կը կարօտին մշակման եւ խմբագրութեան, ինչպէս նաև բաւական թիւով արխիւային նիւթեր:

Մէկ խօսքով, Մեղունեան նուիրատուութեան աքղով յատկացուած տարեկան վարկը տարիներէ ի վեր հայկական մշակոյթին կը մատուցանէ անդնահատելի ծառայութիւն մը: Անցեալ տարուան գումարն է Ա. Ո. 3691. 5. 11:

5. — ՄԱՐԻ ՆՈՒՊԱՐ ԱԿՆԱՐՈՒԺԱՐԱՆ

1935 թ. ընթացքին Ակնարուժարանը փակ մնացած է Մարտ 15 ն մինչև 26 եւ Յուլիս 15 ն մինչև 2 Դեկտեմբեր:

Ընդունուած են 340 հիւանդներ, որ բուժարանին մէջ անցուցած են 4382 օր (միջին հաշուով իւրաքանչիւրը 13 օր) եւ դրաւուած մահահիճներու միջին թիւը եղած է 20:

Հիւանդները հետեւեալ կերպով կը բաժնուին.— Ըստ տարիքի՝ 27ը 15էն վար, 313ը 15էն վեր: Ըստ սեռի՝ 198 այր եւ 142 կին: Ըստ ազգութեան՝ 300 Հայ, 34 Թուրք եւ 6 ուրիշ ազգեր: Ըստ հիւանդութեան՝ 49ը թրախոմա: Ակնարուժարանին մէջ կատարուած են 323 վիրահատումներ:

Բաց աստի, Ակնարուժարանին մէջ այցելութեամբ խնամուած են 10962 հիւանդներ (օրական միջին հաշուով 52):

1934 թ. ընթացքին կատարուած բոլոր վիրարութեան գործողութեանց եւ վիրարութեան օժանդակութեանց ընդհանուր թիւն է 804, որոնց 797ը լաւացում յառաջ բերած են:

Բուժման որակը բարձրացնելու համար գործադրուած են վիրարութեան նոր միջոցներ, զոր առաջարկած եւ գործադրած է Ակնարուժարանի օգնական Բժ. Մ. Մուսեան:

Ակնարուժարանի դատախօսութիւններ կարգադրուած եւ գործնա-

կան աշխատանքներ կատարուած են Բժշկական Կաճառի եւ Բժշկական Թեխնիքումի ընթացաւարտ ուսանողներուն համար:

Ակնարուժարանին մէջ կատարուած է նաև « Մալարիայի ժամանակ յառաջ եկած կիրատիտի ուսումնասիրութիւն »ը Բժ. Մեղիք Մուսեանի եւ Բժ. Մեսրոբեանի կողմէ: Ուսումնասիրութիւնը տպագրութեան համար ուղարկուած է Մոսքուայի Կեդր. Ակնարուժարանի ամսագրութիւն:

1934 թ. ընթացքին նոյն ամսագրութիւնը տպագրած է Բժ. Մուսեանի երկու աշխատանքները:

Ակնարուժարանի թէ՛ դիտահետազոտական եւ թէ՛ գործնական աշխատանքները մեծապէս զիւրացած են, շնորհիւ մեր Միութեան կողմէ նուիրուած կարգ մը գործիքներու:

Մէկ խօսքով, մեր հայրենիքին մէջ աչքի հիւանդութիւնները մեծ համեմատութիւններու յանդամ ըլլալով, Մարի Նուպար Ակնարուժարանը մեծ դեր մը կը կատարէ իբրև օգտակար եւ արդիւնաւոր Հիմնարկութիւն:

6. — ԶԱՆԱԶԱՆ

Անցեալ տարեշրջանին ալ սիրալիւր փութկոտութեամբ գործադրեցինք Խ. Հայաստանի Կառավարութեան այլադան ապսպրանքները, որ ընդհանրապէս կը փոխարինեն Միութեանս կողմէ տրամադրելի դրամական վճարումները: Ժողկոմխորհի ցոյց տուած վստահութիւնը մեր վրայ պարաք կը դնէ սրտազին հոգածութեամբ գործադրելու էր հրահանգները, ջանք չի խնայելով որ լաւատեսակ ապրանքներ հայթայթուին առաւելագոյն զեղչերով եւ խնայողութեամբ:

1934 թ. գործադրուած ապսպրանքները հետեւեալներն են. — 12 Փօրտ եւ 1 Բատիլաք ինքնաշարժ կառքեր, Լինքըն, Պուելք, Բատիլաք եւ Փօրտ կառքերու մասեր, Երեւանի Հիտրոէլեքտրակայանին համար գործիքներ, Ռատիոյի վեց գործիքներ, Էտիֆօն գործիք, Փօնօֆօր եւ մասեր, Ռիօնթիկէնեան գործիքի մասեր, Ելեքտրական թել, բժշկական գործիքներ եւ դիրքեր, դեղօրայք, սաֆիա, ծովու խոտ, նկարչական նիւթեր, նամակի թուղթ, պահարան եւ մեղան:

Մեղունեան Յանձնախումբի հաշուոյն եւս կատարեցինք գնումներ, տպագրական եւ կաղմարարական մեքենաներու, ինչպէս նաև հայագլխաւիան գիրքերու:

Բաց աստի, Երեւանի Համալսարանի Բատիո — Ելեքտրական Լապտրաթուառին համար մաս մը գործիքներու անհրաժեշտութիւնը

մասնանշած ըլլալով վարիչ Բրոֆ. Անտուր, Մխութեանս կողմէ նուիրուեցան ասանք. ծախսուած գումարն է Ա. Ո. 87.12. 6:

Գահիրէէն Տեարք Կ. և Զ. Սարեանի կողմէ Մխութեանս յանձնուած 500 Անգլ. սակին Հայաստանի Կառավարութեան արամաղբեցինք, նոր Կեսարիոյ մէջ ըստ համաձայնութեան Մսուրի մը կառուցման համար: Այդ աւանին հիմնարկէքին ասիւր ևս նախապէս մեզի յանձնած էին 24.18. 3 Անգլ. սակի վոր ըստ պայմանի յատկացուցինք հիմնաքարին:

Վերջապէս, Երուանդ Յակոբեանի հիմնադրամին եկամուտը Ա. Ո. 161. 7. 6 արամաղբեցինք Մարտունիի մէջ ևս յիշեալ Բարերարին անունով գիւղալիին գոլրոցի մը շինութեան համար, իսկ ի յիշատակ ողբ. Տիկ. Գայեանէ Նշկեանի մեզի գրկուած 45. 1.— սակիի նոր գումարը ևս իր անունով Ազարակի մէջ կառուցուած վարժարանին յատկացուցինք:

Բ.— Ո Ր Բ Ե Ր Ե Ի Ո Ր Բ Ա Ն Ո Յ

1.— ՆԵԿՈՍԻՈՅ ՄԵԼԻՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Մխութեանս սոյն Հաստատութիւնը 1933 - 1934 տարեշրջանն ալ բոլորեց կանոնաւորութեամբ, շնորհիւ թէ՛ նախապէս և և թէ՛ սոյն տարեշրջանին սկիզբը կատարուած նորագոյն կարգադրութեանց:

Տարեշրջանին սկիզբը Հաստատութիւնը ունէր 300 աշակերտ (որոնց 185ը մանչ և 115ը աղջիկ): Տարւոյն վերջը այս թիւը յանդեցաւ 332ի, (196 մանչ և 136 աղջիկ), յաջորդական մեկնումներու և ժամանումներու հետեւանքով: Նորընտիր սաներուն թիւն է 43 (որոնց 21ը մանչ և 22ը աղջիկ): Ասոնց 17ը Պէյրութէն ևն, 8ը Սուրբիոյ ուրիշ քաղաքներէն, 10ը Եգիպտոսէն, 4ը Կիպրոսէն, 2ը Միտիլլիէն և Գալաթիէն և 2ը Մարտիրոսիէն: Ըստ ընտանեկան վիճակի, Մխութեանս սաները կը բաժնուին չորս դասակարգի. — Հօրէ և մօրէ որբ (53), հօրէ որբ (160), մօրէ որբ (22), չքաւոր ծնողքի զաւակ (97):

Ասոնցմէլ զատ, Հաստատութիւնը ունեցած է նաև ցերեկեայ 14 աշակերտներ և 7 աշակերտուհիներ, մեծ մասամբ ուսուցչի կամ Հաստատութեան պաշտօնեայի զտակ, որ ևս երբ հաշուի տանուին, ուսանողութեան ընդհանուր թիւը կը բարձրանայ 351 հոգիի:

1933 - 1934ին շրջանաւորաւ կղած են 23 սաներ, որոնց 11ը մանչ և 12ը աղջիկ:

Անցեալ տարի կարելի եղաւ վերջապէս կազմակերպել Մեղքոնեան Կրթ. Հաստատութեան կողքին Վարժապետանոցը, որուն կը հետեւին 18 երկսեռ ուսանողներ, չորսը Մեղքոնեան շրջանաւորաւ սաներէն, տեսչութեամբ յայտնի գրագէտ Տ. Վահան Թէքէեանի: Բացումը պաշտօնապէս կատարուած է 4 Դեկտեմբերին: Վարժապետանոցի նըկատմամբ մանրամասնութիւններ պիտի արուին 1934 - 1935 տարեշրջանի տեղեկատուութեան մէջ:

Աւելորդ է ըսել որ մեր գաղութահայ կեանքին մէջ մեծ պակաս մըն է որ այդու կը լրացուի, քանի որ օժտուած ուսուցիչներու պէտքը ամէն օր աւելի ևս զգալի դարձած է:

Աշակերտութեան ասոցիական վիճակը, ասօրեայ հողածութեամբը Տօքթ. Թուճեանի, ըստ ամենայնի գոհացուցիչ եղաւ, չընորհիւ մարմնակրթութեան և ասոցիակահայ հողածութեան: Ո և է ծանր հիւանդութիւն չի պատահեցաւ: Ֆիզիքական կրթութեան զանազան ճիւղերը շարունակուեցան կերարկուել: Մարմնամարզի օրական վարժութիւններէն զատ, սաները հետեւեցան զանազան սրորներու, ինչպէս Փուլթալի, պատքէթալի, թէնիսի, և դնահատելի յաջողութիւններ ունեցան օտար խումբերու հետ մրցմանց մէջ շահելով ատաջնութիւնը: Սաները մասնակցեցան նաև համակիրարկական սլիմպիական խաղերուն և շահեցան 1 ատաջնութիւն, 3 երկրորդութիւն և 3 երրորդութիւն:

Սկսուտական կազմը յարարերարար աւելի մեծ դործունէութիւն մը ունեցաւ քան անցեալ շրջանին, պաշտօնապէս ճանչցուած և անդլիացի սկսուտներու ամէն առաւելութիւններն ու ատանձնաչնորհումները վայելելու իրաւունքը ստացած ըլլալով: Հակառակ իր սկզբնաւորութեան, Մեղքոնեան մարդախումբը ախար խումբ մը կը նկատուի: Նոյն տարեշրջանին Հաստատութեան սկսուտներուն թիւն էր 180:

Ինչպէս ամէն տարի, ներկայ շրջանին ևս աշնան և կարնանամուտին, ամբողջ աշակերտութիւնը երեք անգամ պտոյտի դնաց Հաստատութենէն մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ ձիւրքօ ըսուած վայրը, ասանց յիշելու մանր պտոյտները և հեծանիւով դրօսական վոքք արշաւները: Դպրոցական հանդէսներ, թատերական և շարժանկարային ներկայացումներ և այլ հաւաքոյթներ տեղի ունեցան ըստ սո-

վորութեան, որոնց շնորհիւ աշակերտութիւնը հաճելի ժամեր անցուց սերալիք միջնորդութիւնը մը մէջ:

Աշակերտներուն նկարագրի կարծրութեան ըստ առաջնոյն մասնաւոր հոգ տարուեցաւ: Ընդհանուր կարգադաստիարակութեան տեսակէտով եւս Հաստատութեան վիճակը դասացուցիչ եղաւ: Գրեթէ ամէն շաբաթ, տնօրէնը սաներուն խօսած է բարոյական դաստիարակութեան իրենց նպատակը բերող դանազան խնդիրներու մասին:

Կրօնական արարողութեանց եւ սոցիալ կրօնական դաստիարակութեան եւս մասնաւոր խնամք տարուեցաւ ինչպէս նախորդ տարիները:

Սաներն ու սանուհիները շարունակեցին հերթաբար կատարել իրենց բաղձադիմի աշխատանքներն ու ծառայութիւնները, իբրեւ տան դաւակ:

Ուսումնական ծրագիրը ամբողջովին դործադրուեցաւ 1933-1934 տարեշրջանին եւս, եւ դասաւանդութիւնները կատարուեցան անթերի կանոնաւորութեամբ:

Արուեստադիտական կրթութիւնը նախորդ տարեշրջանին իր վերջնական կազմակերպութիւնը ստացած ըլլալով, անխափան շարունակուեցաւ: Բարձրագոյն երկու դասարաններու սաները ժամանակացոյցով իրենց համար սահմանուած պահերուն հետեւեցան իրենց նախատրամ ճիւղերուն (մեքենագիտութիւն, կահագործութիւն, լուսանկարչութիւն, կազմարարութիւն): Առեւտրական ուսմանց կը հետեւին բարձրագոյն կարգի բոլոր սաները, իսկ ստորին դասարանի աշակերտներէն ոմանք՝ կազմարարութեան:

Գիտական աշխատանոցը եւ մատենագրարանը իրենց օգտակար եւ անհրաժեշտ բաժինը բերին՝ դասաւանդութեանց եւ սոցիալ ընդհանուր զարգացման:

Երէց սանուհիները ըստ առաջնոյն պատրաստեցին ձեռագործներ եւ կատարեցին կարի եւ կարկտանի աշխատութիւնները:

Հաստատութեան պաշտօնէկութեան թիւը ներկայ շրջանին 57 էր, որոնցմէ 22ը ուսուցիչ եւ ուսուցչուհի:

Ուսուցչական մասնաւոր ժողովը ըստ առաջնոյն զբաղեցաւ ծրագրային խնդիրներով, Հաստատութեան ընդհանուր կեանքին հետ կապ ունեցող լուրջ պարագաներով, Վարժապետանոցի հիմնարկութեան յատուկ աշխատութիւններով, գործելով նաեւ իբրեւ Դասագիրքերու Յանձնախումբ: Ուսուցիչներու ընդհ. ժողովը զբաղեցաւ

կրթական եւ կարգադասական այնպիսի հարցերով որ կը հետաքրքրեն ամբողջ ուսուցչական կազմը:

Կիպրոսի բարձունքին յաճախողէպ երաշուութեան հետեւանքով, Մելքոնեան Հաստատութիւնը պարբերաբար ջուրի նեղութիւն կը կրէ, եւ առ այդ ինչ որ զբաղէս հնարաւոր էր փորձուած է ցարդ, մասնաւորապէս արթնգեան հորերու եւ ջրամբարներու շինութեամբը: Այդ մասին տեղւոյն վրայ քննութիւն մը կատարելու համար, Աղաթօն Պէյի գիմուսին վրայ Գահիրէէն մասնագէտ Տ. Յակոբ Յակոբեան ազնուութիւնը ունեցաւ Նիկոսիա երթալու, բարեսիրտաբար, բայց ուրիշ հնարք մը չի կրցաւ գտնել այդ տաղնապին դէմ, բայց եթէ հորերու եւ ջրամբարներու յաւելումը:

Այս շրջանին, Հաստատութիւն այցելեցին բաղձապիւ ականաւոր անձնաւորութիւններ, որոնցմէ յիշենք Կիլիկիոյ Վեհ. Տ. Սահակ Կաթողիկոսը, Կիպրոսի Վսեմ. Կառավարիչը եւ Տիկիւնը: Կիլիկիոյ Աթոռակից Կաթողիկոս Տ. Բարդէն Ա. ամբողջ ամիս մը անցուց Հաստատութեան մէջ, Կիպրոսի իր հովուական այցին առթիւ:

Բարերար Կարապետ Մելքոնեանի մահը, որ տեղի ունեցաւ Աղեքսանդրիա, 23 Յուլիս 1934ին, անսահման վիշտով համակեց ամբողջ Հայութիւնը, որ սուգի վայելուչ արտայայտութիւններ կազմակերպեց: Բարերարին մարմինը Օգոստոս 16ին Աղեքսանդրիայէն Նիկոսիա հասաւ, ուր Օգոստոս 19ին, Կիլիկիոյ զոյգ Կաթողիկոսներուն նախագահութեամբ, եւ մասնակցութեամբ Կիպրոսի Առաջնորդ Գեր. Սարաճեան Արքեպիսկոպոսի ու ամբողջ եկեղեցական դասին, եւ կրօնական ու աշխարհական օտար հրաւիրեալներու, կատարուեցան յուղարկաւորութեան եւ թաղման մեծահանգէս արարողութիւնները:

Դասագիրքերու Յանձնաժողովը, որուն մաս կազմեցին Հաստատութեան տնօրէնը, աւագ ուսուցիչները եւ գիւնապետը, պաշտօն ունեցաւ պատրաստելու նախակրթարաններու մէջ դործածութիւնը յանձնարարելի դասագիրքերու ցուցակը, ինչպէս նաեւ ցուցակը այն դասագիրքերուն որոնց հրատարակութիւնը անհրաժեշտ կը նկատուէր: Ասոնցմէ առաջինը հազորդուեցաւ Միութեան սեփական եւ նպատակակալ վարժարաններուն, իսկ երկրորդը՝ մամուլին միջոցաւ դասագիրքերու հեղինակներուն ուղադրութեան: Յանձնաժողովը քննեց նաեւ հրատարակութեան համար ներկայացուած դասագիրքերու ձեռագիրները: Դժբախտաբար Յանձնաժողովին ներկայացուած ձեռագիր եւ տպագիր գործերէն եւ ոչ մին համապատասխան գտնուե-

ցաւ ներկայ պահանջներուն եւ հրատարակուած Ձեկոյցին պայմաններուն :

1934 տարեշրջանին Հաստատութեան համար ծախսուեցաւ Ա. Ո. 10950.13.10 :

2.— ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅ ՈՐՐՈՆՏԻՆԵՐՈՒ ՊԱՅԱՆ

Աղեքսանդրիոյ Որբուհիներու Կայանը, 1934ին եւս, շարունակեց պահել իր դոյութիւնը կրճատեալ ձեւով մը : Այս Հաստատութեան փակումը յետաձգուած ըլլալով 1935ին, Միութեան վերջին յատկացումը, 100 Եդ. սակի, կատարուեցաւ այս տարեշրջանին (Ա. Ո. 102.11. 3) :

Պէտք է ըսել թէ Աղեքսանդրիոյ հայ որբուհիները, Տիկնանց Խնամակալութեան մղումին ներքեւ, փոխադարձ օգնութեան եւ համադրժակցութեան ղեղեցիկ օրինակ մը ցոյց տուին, երեք տարի շարունակաբար լայնօրէն մասնակցելով իրենց Տան ծախքերուն, մինչդեռ Գահիրէի որբուհիները նոյն ուղին ցոյց չի տալով պատճառ կրան Գահիրէի Կայանին աւելի կանուխ զոցուելուն :

Աղեքսանդրիոյ Տիկնանց Խնամակալութիւնը շարունակեց պահել որբուհիներու խնայած դրամները տեղւոյն Լօյտո՝ Պէնքին մօտ բացուած մասնաւոր հաշիւին ներքեւ, 2 1/2 % տոկոս մը ստանալով յօգուտ աւանդատէրներուն :

1934ին Աղեքսանդրիոյ որբուհիներէն 16 աղջիկներ ամուսնացան :

Տիկնանց Խնամակալութիւնը, նախադասութեամբ Տիկին Վիքթորիա Արշարունիի, պահապան հրեշտակ մը հանդիսացաւ այս որբուհիներուն : Սոյն Խնամակալութեան կազմն է՝ Տիկնայք Արշարունի, Արրահամեան, Գալլուզեան, Թուղլաճեան եւ Չպուզճեան :

3.— ԳԱՀԻՐԷԻ ՈՐՐՈՆՏԻՆԵՐՈՒ ՊԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Որքան որ Գահիրէի հայ որբուհիներու Կայանը փակուած է 1933էն ի վեր, սակայն Տիկնանց Խնամակալութիւնը կը շարունակէ իր գործը, հարկ եղած բարոյական հակակշիռը ի գործ դնելով սանուհիներուն վրայ եւ հոգալով հիւանդները : Ամսական ծախքը, որ կը հասնի 10 - 12 Եդ. սակի, այդ Մարմինը ձեռք կը բերէ տարեկան հաստիքաբեր ձեռնարկով մը : 1934ին, վիճակահանութիւն մը սարքեց եւ այդ միջոցաւ դումար մը գոյացուց յօգուտ իր հիւանդ որբուհիներուն :

րուն դարձանման եւ պատասպարութեան : Երկու թոքախտաւոր որբուհիներ Հէյուանի Սանաթորիոմին մէջ կը պատասպարուին եւ երկու ջղային հիւանդութեանց ենթարկուած որբուհիներ եւս, անբուժելի ըլլալով, տեղաւորուած են քնտանիքներու մէջ, մասնաւոր վճարութով : Ասոնցմէ զատ, Տիկնանց Խնամակալութիւնը կը հարկադրուի երբեմն նոյն իսկ ամուսնացած եւ թշուառութեան ենթարկուած իր նախկին սանուհիներուն փոքր օգնութիւններ բնել :

Գահիրէի հայ որբուհիները կը շարունակեն աշխատիլ օտար ընտանիքներու մօտ բաւական զոհացուցիչ ամսականներով եւ իրենց շահած դրամները առ ի պահ կը յանձնեն Տիկնանց Խնամակալութեան որ, իր կարգին, կը ղեկեղէ անոնք Միութեան դրամատան մօտ բացուած մասնաւոր հաշիւին ներքեւ, վճարելով 2 1/2 % տոկոս :

Որբուհիները, որ բնագրով միշտ անհաշիւ ծախսելու սովորութիւն ունէին, այդ կերպով ոչ միայն խնայողութեան սկզբունքին վարժուեցան, այլ նաեւ քիչ թէ շատ կոկիկ դրամագլուխներու տիրացան, որ մասնաւոր անտեսական տաղնապի այս օրերուն իրենց ամուսնութիւնը գլխաւորելու կը ծառայեն : 1934ին, դարձեալ, Գահիրէի որբուհիներէն 13 աղջիկներ ամուսնացան :

Ամէն զնահատութենէ վեր է Տիկնանց Խնամակալութեան մայրական հոգածութիւնը զոր անխիղ ցոյց կուտայ բախտէն հալածուած այս բեկորներուն : Տիկնանց Խնամակալութեան կազմն էր 1934ին. — Տիկին Աննա Նէկիլ ֓աշա Ղալի՝ Նախադասուհի, Տիկնայք Մ. Նատուրեան, Լ. Կոկանեան, Ա. Անդրանիկեան, Ս. Տէրվիչեան, Ա. Տէմիրճեան, Զ. Մարգարեան եւ Օր. Զ. Աէլեան :

4.— ՔԵԼԷԿԵԱՆ ՈՐՐՈՆՏԻՆԵՐՈՒ ՆԱԵԿԻՆ ՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՅԱՆՈՒԹԻՒՆ

1934ին եւս հարկադրուեցանք Պէյրութի մէջ հոգալ այն վեց սան եւ սանուհիներու դարձանման եւ պատասպարութեան ծախքերը, որ ժառանգ մնացին Քէլէկեան Որբանոցէն, որովհետեւ անոնք բացարձակապէս անոք են եւ ենթարկուած անբուժելի ու քրոնիկ հիւանդութեանց, ինչպէս՝ թոքախտի եւ ջղային հիւանդութեանց : Բախտէն կրկնապէս հալածուած եղիկներ որոնց միակ միութարութիւնն է Միութիւնը իրենց պաշտպան ունենալին :

1934ին ասոնց համար ծախսուած գումարն է Ա. Ո. 182. 2. 8 :

5.— ԶԱՆԱԶԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

1934ին յօդուտ որբերու բացատիկ օգնութիւններ եւս ընծայեցինք: Ա. Ո. 66.13. 4 Բարեղի Հայ Տիկնանց Միութեան որդեգրած որբերուն եւ Ա. Ո. 50 Գայա - Բունարի (Սուրիա) Լէքսիոս Որբանոցին:

Նոյնպէս եւ Պասքէօյի Գայֆայեան Որբանոցին յատկացուցինք Սեդրակ Դաւիթեանի հիմնադրամին եկամուտը Ա. Ո. 4.10. 6:

Գ.— ԿՐԹԱԿԱՆ ԶԵՆՆԱՐԿՆԵՐ

1.— ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Մեր նախորդ Տեղեկագրին մէջ ընդարձակօրէն պարզեցինք այն կրթական ծրագիրը զոր տարիներու փորձառութեան, ինչպէս եւ ձեռնհաս մարմիններու ու անհատներու ուսումնասիրութեանց եւ եզրակացութեանց վրայ հիմնուելով, որդեգրեցինք անցեալ տարեշրջանին:

Այժմ որ նախափորձերու շրջանը անցած է եւ առաջին դժուարութիւնները հարթուած են, կրնանք անվերապահօրէն ըսել թէ այսօր գաղութահայութեան մէջ Միութեանս գլխաւորագոյն մարզը կը հանդիսանայ կրթական դործը, որ 1934ին տուաւ աւելի դրական եւ շօշափելի արդիւնքներ:

Այդ ծրագրին հիմնական կէտն էր կրթական վարկերու յատկացումը, նախընտրաբար չքաւոր համայնքներու մէջ, կարգ մը վարժարաններու որ Միութեանս ուղղակի գործակցութիւնը եւ հակակշիռը կ'ընդունին փոխադարձ համաձայնութեամբ, մինչեւ որ, տակաւ առ տակաւ, մեր Միութիւնը ի վիճակի ըլլայ արդար վարժարաններ հիմնելու Մերձ. Արեւելքի մէջ:

Ընդհանրապէս երկու դասի կը բաժնուին այն վարժարանները որ պէտք ունին Միութեանս օժանդակութեան, առանց որուն պիտի դատապարտուին փակուելու, եւ կամ խոշոր բացեր պիտի ունենան: Անոնք են գիւղերու եւ գլխաւոր քաղաքներու վարժարանները: Գիւղերու վարժարանները թէեւ շատ նախնական վիճակի մը մէջ կը գտնուին եւ մեծ մասամբ անդոճացուցիչ չէնքերու մէջ հաստատուած են, բայց եւ այնպէս, ազգային տեսակէտով, անուրանալի դեր մը կը կատարեն, այդ կղզիացած վայրերու հայ երկսեռ մանուկներուն սորվեցնելով իրենց մայրենի լեզուն, ու բաւարար տեղեկութիւններ տա-

լով անոնց՝ ազգային պատմութեան մասին: Առանց այդ վարժարաններուն, այդ մանուկները դատապարտուած են փոքրցները թափառելու եւ կամ օտար վարժարաններ յաճախելու, ինչ որ երկու պարագային ալ հայութեան համար կորուստ պիտի ըլլար: Գիւղական այդ վարժարանները կանգուն կը մնան ու իրենց ազգապահպան դերը կը շարունակեն միմիայն Միութեանս օժանդակութեան շնորհիւ: Ահա թէ ինչո՞ւ համար սկիզբէն ի վեր եւ ըստ կարելոյն չի զլացանք մեր պաշտպանութիւնը այդ չքաւոր վարժարաններուն: Ուրիշ առաւելութիւն մըն ալ որ կը ներկայացնեն այդ վարժարանները այն է որ անոնք, առանց դժուարութեան, կ'ենթարկուին Միութեանս, մինչդեռ քաղաքներու վարժարանները նպաստ ակնկալելով հանդերձ, խուսափել կ'ուզեն Միութեանս անմիջական ու գործնական հակակշիռէն՝ որուն նպատակը ուրիշ բան չէ այլ ապահովել միայն ու միայն նպատակակալ եւ հովանաւորեալ վարժարաններուն կանոնաւորութիւնը: Արդարեւ, տեղ տեղ, բարեբախտաբար ցանցատ, ազգային իշխանութիւնները Միութեանս գործակցութիւնը եւ հսկողութիւնը իրենց հեղինակութեան ոտնակոխումը կը համարեն, սխալ հասկացողութեամբ մը, առաւելապէս անձնական կամ հատուածական նկատումներով, քանզի այդ հակակշիռը, որ Միութեանս անմիտելի իրաւունքն է, չոտնակոխեր երբեք ազգային իշխանութեանց հեղինակութիւնը, այլ կ'ապահովէ համբարաչխ գործակցութիւն մը որ բնականապէս կը նրպաստէ այդ հեղինակութեան ամբապնդումին, վարժարաններու վիճակին զգալի բարելաւումովը ու զուտ տոհմային ոգիով մաքուր եւ առողջ դատախարակութեան մը ջամբումովը:

Ինչպէս արդէն անցողակի յիշեցինք վերը, Միութեանս կրթական ծրագրին կիրարկութեան դժուարութիւնները կը ծագին գլխաւորաբար քաղաքներու մէջ ուր ազգային եւ կէս - անհատական վարժարաններ գոյութիւն ունին, եւ ուր հատուածական եւ այլ նկատումներ շատ չեզոքուած են: Այս վարժարանները մրցումի մէջ են շատ աշակերտ ապահովելու նպատակաւ, եւ յաջողելու համար յաճախ մեծ թիւով ձրի աշակերտներ կ'ընդունին, որ սակայն նուազագոյն թուակ մը վճարելու ի վիճակի են: Այսպէսով, այդ վարժարանները ամէն տարի խոշոր բացերով կը փակեն տարեշրջանը: Ինչպէս յայտնի է, մինչեւ 1933 քաղաքներու այդ վարժարաններուն կ'օգնէինք 30 - 40 - 60 - 80 Անգլ. ոսկի տարեկան նպաստներով, որ իրենց պիւտճէին մէկ փոքր մասը կը կազմէին եւ չէին կրնար մեզի իրաւունք տալ իրական հակակշիռ մը ի դորձ դնելու այդ նպատակակալ վարժարաններուն վրայ:

1934 - 1935 զարոցական տարեշրջանին, այս պատճառաւ նպատակաշարժար դատուեցաւ խորաքանջիւր գլխաւոր քաղաքի մէջ մէյ-մէկ վարժարան հովանաւորել 100 - 200 սակի տարեկան նպաստով մը: Այսպէս, Միութեանս հակակշիռին ներքեւ տնտեսեցան Գամաս-կոսի մէջ տեղւոյն Ազգային Վարժարանը, 150 Անգլ. Ոսկի տարեկան յատկացումով, Պէյրութի մէջ Ամանոս Բէմբի Վարժարանը 160 Անգլ. Ոսկիով, Ալեքսանարէթի մէջ Նուպարեան Ազգ. Վարժարանը 100 Անգլ. Ոսկիով, Թրիփոլի մէջ Նուպարեան նորարաց Վարժարանը 100 Անգլ. Ոսկիով, Աթէնքի մէջ Գօգլինիայի եւ Ֆիքսի Ազգային Վարժարանները 60,000 տրախմիով եւ Սինկրուի Վարժարանը 20,000 տրախմիով: Կը ցաւինք որ Հալէպի մէջ կարելի չեղաւ տակաւին նոյն բանը ընել, դանազան արգելքներով: Փորձառութիւնը հետզհետէ շեշտակի ցոյց տուած ըլլալով անհրաժեշտութիւնը դէթ գլխաւոր քաղաքներուն մէջ Միութեանս կրթական ծրագիրը կերարկութեան դնելու՝ սեփական Վարժարաններու հաստատումով, ինչ որ հիմը կը կազմէ մեր կրթական ծրագրին, 1934 - 1935 զարոցական տարեշրջանին հնար եղաւ նախաքայլը տանել, Միութեան Սեւանիկի Վարժարանին բացումով (Վարտար դպրոցականական թաղամասին մէջ), որ այնքան խանդավառութիւն ստեղծեց յիշեալ դպրութիւն մէջ եւ որ եկաւ դրական կերպով ազդեցանելու վերեւ յիշուած անհրաժեշտութիւնը, ստանձնելով մեծ մասամբ չքաւոր աշակերտներու դաստիարակութեան հոգը: Անշուշտ, շնորհակալութեան մեծ պարտք մը ունինք Գանիական Միսիոնարութեան, որ այդ Վարժարանը ոչ միայն Միութեանս փոխանցեց իր բոլոր գոյքերով, այլ նաեւ առաջին տարուան համար 100,000 տրախմիի օժանդակութիւն մը ընծայեց՝ որ տարակույս չունինք թէ պիտի շարունակուի յաջորդ տարեշրջաններուն ալ: Այդ Վարժարանը գրուեցաւ Տ. Կ. Գաղանձեանի տեսչութեան ներքեւ, ընդ հսկողութեամբ Կրթական Յանձնախումբի մը եւ Սեւանիկի Մասնաժողովին, որ ամէն ջանք ի գործ դրին Վարժարանը իր նպատակին ծառայեցնելու համար, եւ անոր մէջ լրիւ յաջողեցան, հակառակ այն դժուարութիւններուն եւ խոչընդոտներուն որ յարուցուեցան այդ ազդեցութեան ձեռնարկին դէմ: Այս առաջին փորձը իր արդիւնքով կը քաջալերէ մեր Միութիւնը հետզհետէ հաստատելու իր Վարժարանները, ինչպէս ըսինք, դէթ առ այժմ Յունաստանի եւ Սուրիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, ուր միշտ անպակաս պիտի ըլլան դժուարութիւնները գոյութիւն ունեցող Ազգային վարժարաններուն հետ համաձայնելու մասին, որով եւ այդ բազմահոծ գաղութներուն մատաղ սերունդին ապահովելու դուրս ազգային ասոզը դաստիարա-

կութիւն մը, դերձ հատուածական եւ վարդապետական ամէն նկրտումներէ:

1934 - 1935 զարոցական տարեշրջանին Միութեանս նպաստաւորած եւ հովանաւորած Վարժարանները, ըստ երկրի, կը բաժնուին հետեւեալ կերպով. —

Սուրիա	56	Վարժարան
Լիբանան	30	»
Յունաստան	23	»
Պաղեստին	3	»
Իրազ	1	»
Պուլկարիա	6	»
Ֆրանսա	13	»

Համագումար 132 Վարժարաններ, որոնց մէջ կը դաստիարակուին աւելի քան 15,000 երկեսո հայ մանուկներ եւ պատանիներ: Ասոնցմէ Ֆրանսայի Վարժարանները մեծ մասամբ հայերէնի եւ ազգ. պատմութեան Գասարաններ են, Բարիզի եւ Լիոնի մէջ:

Նպաստընկալ Վարժարաններու հսկողութեան գործը աւելի եւս կանոնաւոր հանգամանք մը առաւ 1934 - 1935 զարոցական տարեշրջանին, Տ. Մ. Նաթանեանի Սուրիոյ եւ Լիբանանի մէջ իր Կրթական Տեսուչ պաշտօնավարութեամբը եւ Յունաստանի մէջ եւս Տ. Կ. Խասանիկեանի Կրթական Քննիչ անուանումովը՝ Սեպտեմբերէն սկսեալ: Քասանիկի, Կիւմրիլճիկի եւ Տրամայի Ազգային Վարժարանաց ընդհանուր տնօրէն նշանակուեցաւ Տ. Վ. Բաղրեւանդեան, որ ոչ միայն օգտակար հանդիսացաւ այդ Վարժարաններուն վիճակը բարելաւելու՝ այլ նաեւ բրորականութի եւ այդ վայրերու Մասնաճիւղերուն զօրացման տեսակէտով: Ներկայ տարուան ընթացքին Միութեանս Բարիզի գործիչը Տ. Օննիկ Թաղէոսեան (նախկին ուսուցիչ) շրջան մը ըրաւ Ֆրանսայի մէջ, մօտէն ուսումնասիրելու համար նպաստընկալ Վարժարանները եւ հայերէնի Գասարանները, ինչպէս եւ Պուլկարիոյ մէջ քննական շրջան մը կատարեց Յունաստանի գործիչ եւ կրթ. քննիչ Տ. Խանիկեան:

Անտարակոյս, հետզհետէ աւելի պիտի ամբապնդուի գործակցութեան եւ հսկողութեան գործը՝ որ, սակայն, բաւական չէ Վարժարանները բազմացուած վիճակին հասցնելու, եթէ հնար չըլլայ հետզհետէ լրացնել պատրաստուած ուսուցիչներու եւ դասադիրքերու պակասը:

Բարերախտարար այդ ուղղութեամբ ալ մեր ջանքերը հետզհետէ կը սրահուին արդիւնաւորապէս: Նրկոսիոյ Վարժարանները յառաջիկայ տարի կուտայ իր առաջին շրջանաւարտները, պատրաստուած երկուսուցիչներ որ անմիջապէս պաշտօններու պիտի կոչուին Միութեան սեփական եւ նպաստընկալ Վարժարաններուն մէջ: Դասադիրքերու մասին ալ անցեալ տարի լուրջ աշխատանք թափուեցաւ, բայց զժրախտարար մասնաւոր զեկոյցներով ցոյց տրուած պէտքերուն լիակատար դո՛հացում տուող դասադիրքերու ձևազօրներ չի ներկայացուցան: Այսուհանդերձ, այդ գործը եւս անպայման կ'իրականանայ մօտերս:

1934ին, կրթական ձեռնարկներու համար ծախսուած գումարն է 4014.15. 4 անդլ. ոսկի, յօգուտ Միութեան սեփական, նպաստընկալ եւ հովանաւորեալ Վարժարաններուն, ինչպէս նաեւ հայերէնի դասընթացքներուն (գլխաւորաբար Բարիդի մէջ, տարեկան Ա. Ո. 334.15. 1 ծախքով), չի հաշուելով յետագայ գլուխներուն մէջ նշանակուած գումարները:

2. — ՀԵԼԵՆՈՒԹԻՍԻ ՆՈՒՊԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Ողբ. Պօղոս Նուպար փաշայի մասնաշատուկ հիմնադրամին եկամուտէն անցեալ տարեշրջանին ըստ կտակի Հէլիոթրիսի Նուպարեան Վարժարանին տրամադրեցինք Ա. Ո. 465. 5. 2, Գահիրէի Ազգ. Առաջնորդարանին միջոցաւ:

3. — ՅԵՏ-ԴՊՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ատենէ մը ի վեր մեր սրտադին ուշադրութեան առարկայ ըրինք զաղութահայութեան մէջ ցանուցիր երիտասարդութեան կազմակերպումը, Միութեան հոգածու հովանիին ներքեւ, այդու գլուխ հանելու համար այլապէս կենսական գործ մը, այն է յետ - դպրոցական դաստիարակութիւնը դեռահաս սերունդին, մասնաւորաբար Միութեան Որբանոցներէն եւ Վարժարաններէն դուրս եկած երիտասարդներուն, որոնցմէ շատեր խմբովին դիմումներ սկսած էին ընել արդէն մեր Միութեան: Ինչպէս յայտնի է, Միացեալ Նահանգներու մէջ Միութեան Կրտսերաց Լիկաները արդէն քանի մը տարուան ընթացքին զգալապէս զարգացան եւ մեր Միութեան շարքերուն մէջ ներարկեցին իրենց երիտասարդական կորովը. անոնք կը պատրաստուին վաղուան լուրջ պարտականութեանց, Միութեան կարեւոր աշխատանքներուն մասնակցելով այժմէն իսկ:

Ամէն սիրաի խօսող այս շարժումը չէր կրնար մեզ անտարբեր թողուլ, որով եւ ընդ առաջ երթալով Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին առաջարկութեանց, նախ Սուրիոյ մէջ եւ յետոյ Եգիպտոսի, ձեռք առինք Երիտասարդական Միութեանց կազմակերպումը, Բարեկործականի Տուներու եւ Մարզարաններու հաստատմամբ: Առաջին շրջանին յատկացուցինք, իրբեւ նախափորձի ծախք, Ա. Ո. 250, իսկ Գահիրէի ձեռնարկին համար Ա. Ո. 200: Ներկայ տարուան ընթացքին եւս Ա. Ո. 200 տրամադրեցինք Յունաստանի շրջանին համար:

Մեր յառաջիկայ Տեղեկագրին վերապահելով այս կարեւոր ծրագրին ընդլայնումը, հիմնուելով առաջին արդիւնքներուն վրայ, այժմէն իսկ կը փութանք յայտնել թէ մեծապէս քաջալերական են առաջին փորձերը, եւ համոզուած ենք որ մեծ պակաս մը լրացուցած պիտի ըլլանք մեր մշակութային գործունէութեան մէջ, այդ ուղղութեամբ եւս լարելով մեր ջանքերը եւ Հ. Բ. Ը. Միութեան սիրալիր ու հոգատար պաշտպանութեան տակ առնելով լրջախո՛հ ու գիտակից երիտասարդութիւն մը, ապահովելով մեր համակրելի կրտսերներուն քաղաքացիական առողջ դաստիարակութիւն մը, եւ մաքուր ու հաճելի մթնոլորտի մը մէջ, զերծ խաթարիչ ամէն տեսակ աղակներէ, անոնց աղբային նկարագրին ու բարձրագոյն բարոյականի կազմութեան հոգ տանելով:

4. — ԶԱՆԱԶԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

Անցեալ տարի, բացի վերոգրեալ ծախքերէն, կրթական այլազան նպաստներ ալ յատկացուցած ենք, որոնց համագումարն է Ա. Ո. 223. 6. 8:

Ա. — Այդ գումարին մէջ կը գտնուի 133. 6. 8 ոսկիի օժանդակութիւն մը Սեւրի Սամուէլ Մուրատ Վարժարանին կիսաթոշակ ուսանողներու վարկին համար:

Բ. — Գահիրէի նորահաստատ Հայ Կաթ. Վարժարանին նախնական ծախքերուն իբր մասնակցութիւն Ա. Ո. 40:

Գ. — Լեւոն Սեմերձեան հիմնադրամին եկամուտէն Ա. Ո. 25, Սիլւոտարի Ազգ. Վարժարանին տրամադրուած կրթական վարկ մը:

Դ. — Աթէնքի Ամբրիկեան Գօլէճին մէջ մանկավարժական մասնագիտութեանց հետեւող հինգ հայուհիներու համար հարկ եղած ծախքերուն թերհաշիւ վճարում Ա. Ո. 25:

2.— ԶԱՆԱԶԱՆ

Ա.— Շնորհիւ ձանդիկեան հիմնադրամին, անցեալ տարի յաջողեցանք նաև անոր եկամուտէն բաղմաթիւ թուրքախտաւորներու օգնել, Ա. Ո. 117.12. 7 տրամադրելով ըստ պարագայի: Գծրախտաբար սկզբը անսահման է, որովհետև այլ անողոր հիւանդութիւնը ճարակ գտած է զլիսաւորաբար չքաւոր համայնքներու մէջ, մտալիկիչ համեմատութեամբ:

Բ.— Բլուխովի Մասնաժողովին միջոցաւ թիֆլիսի համաճարակին անթիւ Միութեանս կողմէ Ա. Ո. 11. 5.—ի օգնութիւն մը բնձնուած է քանի մը հիւանդներու:

Զ.— ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՆԵՐ

1.— Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Մեղրոնեան Նուիրատուութեան պարտադրած պայմաններուն համաձայն, անցեալ տարի եւս Կ. Պոլսի Աղբ. Պատրիարքարանին տրամադրեցինք Ա. Ո. 1589.16. 2 վեցամսեայ վճարումներով, որուն 500 ոսկին յանուն Բարերարին Ս. Փրկչի Հիւանդանոցին մէջ անկողիններու յատուկ է:

2.— ԵՐՈՒՍԱՎԷՄԻ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Նոյն Նուիրատուութեան պարտադիր տրամադրութեանց համաձայն, Երուսաղէմի Պատրիարքարանին վճարեցինք Ա. Ո. 1025, յօգուտ Ժառանգաւորաց Վարժարանին՝ ուր Բարերարին անունով սաներ կ'ուսանին:

3.— Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԿԱԹ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Մ. Ալլահադիբեհի կտակած հիմնադրամին եկամուտին երկու երրորդն ալ, Ա. Ո. 107. 4. 5 վճարեցինք Հայ Կաթ. Պատրիարքարանին, ըստ կտակի յատկացուելու համար Կ. Պոլսի Հայ կաթոլիկ կարօտեալներուն:

Է.— ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԻՒՆ

1.— ԶԱՆԱԶԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

Ինչպէս որ մեր հաշուեկշիռը ցոյց կուտայ (կցեալ թիւ 6), 1934 տարուան ընթացքին գաղթականներու սրտապանութեան համար ծախսած, նաև կարօտեալներու եւ զործազուրկներու օգնած ենք, զանազան նպաստներով եւ վարկերով, որոնց համագումարն է Ա. Ո. 3362. 0. 1: Կարեւորագոյն զլուխները ստորեւ կը մանրամասնենք.—

1.— Շնորհիւ Նանսէնեան Օֆիսի թանկագին օժանդակութեան, կրցանք բաղմաթիւ կարօտ գաղթականներու օգնել, ըստ կարելոյն դրամական նպաստը փոխարինելով ապրուստի միջոցներով, Ա. Ո. 272.13. 4 Սուրբիոյ մէջ, Պէյրութի եւ Հալպի Մասնաժողովներուն միջոցաւ, Ա. Ո. 272.13. 4 Սելանիկի եւ Ա. Ո. 136. 6. 8 Աթէնքի շրջանին մէջ, զոյգ Մասնաժողովներուն միջոցաւ, եւ Ա. Ո. 137. 0. 8 Պուլկարիոյ մէջ, Բլուխովի Մասնաժողովին միջոցաւ:

2.— Մարգար Մերգա կտակադրամով զլիսաւորաբար Յունաստանի բնիկ Իգմիրցի կարօտեալներու այլազան նպաստներ կարգադրեցինք, Ա. Ո. 386. 2. 2:

3.— Թէհրանի Մասնաժողովին հեռագրին վրայ 150 Անգլ. ոսկիի ստիպողական օգնութիւն մը փութացուցինք յօգուտ Բերէյայի շրջանին թշուառ զիւլացիներուն, որոնց մասնաւոր Յանձնախումբի մը միջոցաւ ալիւր եւ ուրիշ նպաստներ յատկացուեցան:

4.— Տ. Գալուստ Կիւլպէնկեանի կողմէ տրամադրուած 5,000 Փրանքի նպաստադրամը (Ա. Ո. 66.13. 4) յատկացուցինք, իր յանձնարարութեան համաձայն, Աթէնքի եւ Սելանիկի չքաւոր գաղթականներուն:

5.— Ամերիկայի կարօտագոյն զործազուրկներուն համար, Նիւ Եորքի Տեղական Ծառայութեան Յանձնախումբին տրամադրեցինք Ա. Ո. 361ի նպաստադրամ մը:

6.— Կ. Պոլսի Աղբ. Պատրիարքարանին զրկեցինք Ա. Ո. 286. 6.—, Խնամատարութեան միջոցաւ յատկացուելու համար Կ. Պոլսի որբերուն եւ գաղթականներուն, ինչպէս եւ մասամբ ալ Կեսարիոյ կարօտեալներուն:

7.— Գործազրկութեան հետեւանքով տաղնապի մասնուած Բարիզարնակ գաղթականներուն համար Աղքատախնամ Ընկերութեան

յանձնեցինք Ա. Ո. 306.13. 5, մասամբ կարօտ մտաւորականներու եւ ինքնութեան թուղթերու յատկացուելու համար :

8.— Գահիրէի Շրջան. Յանձնաժողովին միջոցաւ Սուրիոյ եւ Յունաստանի անդործ եւ չքաւոր գաղթականներուն գանազան առթիւ եւ ձեւի տակ նպաստներ յատկացուած են, որոնց համագումարն է Ա. Ո. 388.19.10 :

9.— Բարիլի նորահաստատ Հայ Տնտեսական Ակումբին նախնական ծախքերուն մասնակցեցանք Ա. Ո. 66.13. 4 վճարելով, նկատի ունենալով որ գաղթականներու տնտեսական վիճակին բարելաւման ծառայելու նպատակը առաջադրած է :

10.— Քանի մը չքաւորներու տեղափոխութեան համար ծախսուած է Ա. Ո. 26. 6. 8 :

11.— Իզմիրի Կարմիր Խաչի նպաստադրամէն աւելցած գումարը եւս Ա. Ո. 7. 7. 4 յատկացուցինք Իզմիրցի չքաւոր հիւանդներու :

Կրնանք այս գլուխին մէջ արձանագրել նաեւ « Զանազանք » տխրասին տակ ցոյց տրուած երկու գումարներ, մին՝ Միութեանս Շարժանկարին համար որ պատրաստուելու վրայ է, Ա. Ո. 27.12. 2, եւ միւրը Ռսկեմատեանին համար որուն առաջին հատորը մօտերս լոյս կը տեսնէ (Ա. Ո. 150), նկատի առնելով որ այս երկու ձեռնարկներէն գոյանալիք զուտ հասոյթը պիտի յատկացուի գաղթականներու օգնութեան գործին :

2.— ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Հայ գաղթականներու վերարերեալ ընդհանուր հարցերը Միութիւնս 1934ին եւս շարունակեց իր մշտարթուն ուշադրութեան առարկան ընել, ուղղակի, ինչպէս նաեւ Գաղթ. Կեդր. Յանձնաժողովի ընդհ. քարտուղար եւ Միութեանս Ժընէվի պատուիրակ Տ. Բաշալեանի միջոցաւ հետապնդելով գաղթականներու պաշտպանութեան, օգնութեան, տեղաւորումի եւ ներգաղթի գործերը: Առ այս արամադրուած վարին ու ծախսուած գումարն է Ա. Ո. 291. 8. 0:

Աղգրուել Ընկերութիւնը, որուն Ժընէվի Նանսէնեան Միջադպային Պաշտօնատան հետ մեր յարաբերութիւնները սերտ գործակցութեան մը գրոջմը կը կրեն, 1934ին ալ իր Սեպտեմբերի Ընդհանուր Ժողովին մէջ որոշում մը քուէարկեց, պաշտօն յանձնելով Նանսէնեան ՕՓիսին որ շարունակէ զբաղել Հայ գաղթականներու Հայաստան փոխադրութեան գործով, քանի որ ներգաղթը, « Հայ գաղթականներու պատաս-

խանատու կազմակերպութեանց յայտնած կարծիքին համաձայն, հայ գաղթականներու հարցին լուծման լաւագոյն միջոցներէն մին է »:

Այս որոշումը մասնաւոր արժէք մը կը ստանար անով որ քուէարկեց նաեւ Խորհրդային Հանրապետութեանց Միութեան Պատուիրակութիւնը, Խորհ. Միութիւնը այդ Սեպտեմբերի նստաշրջանին անգամ ընտրուած ըլլալով Աղգրուել Ընկերութեան: Մենք չի թերացանք, մեր պատուիրակին միջոցաւ, Խորհրդային Միութեան Պատուիրակութեան յատուկ ուշադրութիւնը եւս հրաւիրելու մեր հայ գաղթականներուն ընդհանուր վիճակին եւ ներգաղթի անհրաժեշտութեան եւ ստիպողականութեան վրայ, եւ մեզի հաւաստիք տրուեցաւ թէ Մոսկուա պիտի գրազի այդ հարցով բարեացակամօրէն:

Մեր դիմումներուն վրայ, Ժընէվի Նանսէնեան Պաշտօնատունը 1934ին ալ 10,000 Զուլց. Փրանքի գումար մը տրամադրեց մեզի Սուրիոյ եւ Պուլկարիոյ հայ կարօտ գաղթականներուն համար, յանձնելով 4000 Զուլց. Փրանքի մասնավճար մը, իսկ մնացեալ գումարը ներկայ տարուան սկիզբը ստացած ենք:

Ժընէվի Պաշտօնատան ցանկութիւնն է որ այս գումարները ծախսուին ոչ թէ օրը օրին զբամական նպաստի ձեւին տակ բաշխուած ուղորմութիւններով, այլ գաղթականներուն գործնական միջոց հայթայթեն իրենց ապրուստը ճարելու եւ ինքնարաւ դառնալու: Միութիւնը այնու մանաւանդ սիրայօժար ընդունեց այս բաղձանքը որ իր թիւնը այնու մանաւանդ սիրայօժար ընդունեց այս բաղձանքը որ իր թիւնը մենք միշտ հրահանգ տուած ենք որ իբր նպաստ տրուած գումարները ծառայեն հայ գաղթականին դուրս ելլելու իր մշտնջենական նպաստը չքաւորի վիճակէն եւ ո եւ է գործով մը, որքան ալ համեստ արնկալ չքաւորի վիճակէն եւ ո եւ է գործով մը, որքան ալ համեստ ըլլայ ան, իր եւ իրեններուն օրապահիկը ճարելու:

Նանսէնեան Պաշտօնատունը, դարձեալ մեր դիմումին վրայ, 1934ին վերջերը օգնութեան ձեռք կարկառեց Պէյրութի 150ի չափ հայ գաղթական ընտանիքներուն որ Քէլէկեան Որբանոցին երկու մեծ պարաքներուն մէջ կը բնակէին եւ որ անպատասար մնալու վտանգին ենթակայ էին, այդ պարաքներուն թաղապետական իշխանութեանց հրամանով քանդուելուն պատճառաւ:

Միութիւնս չէր կրնար անտարբեր մնալ այն դժնդակ կացութեան առջեւ որ տնտեսական տագնապին եւ պետական վերջին կարգադրութեանց հետեւանքով ստեղծուած էր Ֆրանսայի հայ աշխատաւորներուն համար: Հետեւաբար, նախաձեռնութիւնը ստանձնեց այս մասին խորհրդակցական ժողով մը գումարելու, որ տեղի ունեցաւ 1934

Նոյեմբեր 5ին Նուպարեան Մասենադարանին մէջ, եւ որուն ներկայ էին Միութեանս Վարչութեան անդամներուն մեծ մասը եւ հայ գաղթականներու զործերով զբաղող հայ կազմակերպութեանց ներկայացուցիչներ: Այդ ժողովին որոշումով, առժամեայ հանգամանքով Միացեալ Յանձնաժողով մը կազմեցին յիշեալ Մարմիններուն պատուիրակներէն, որ անմիջապէս զործի ձեռնարկեց հարկ եղած զիմումները կատարելով, անձամբ եւ զբաւորապէս, Ֆրանսայի բարձրագոյն իշխանութեանց մօտ, որպէսզի մեծ բարեացակամութեամբ վերաբերուին այս երկրին հայ գաղութին ընդհանրապէս եւ հայ աշխատաւորութեան նկատմամբ մասնաւորապէս, ի նկատի առնելով իրենց եղբրական բացառիկ դրութիւնը: Միացեալ Յանձնաժողովը ցարդ կանոնաւորապէս կը շարունակէ իր զործունէութիւնը:

3. — ԱՌԷՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՈՅ

Աթէնքի Աշխատանոցը եւս իր օգտաշատ զործունէութիւնը շարունակեց 1934ին, ապրուստի միջոց հայթայթելով տեղւոյն կարգ մը հայուհիներուն որ աննկող կ'են: 1923էն ի վեր Միութեանս Տիկնանց Յանձնախումբին ցոյց տուած անձնութիւնը ամէն զնահատանքի արժանի է: 1934ին ալ Տիկնանց Յանձնախումբը յաջողեցաւ, իր հասցիներու առաւելութեամբ, Աշխատանոցի գրամադրութիւն հաշուոյն 18,750 արախով վճարում մը ընել: Միութեանս միակ Հաստատութիւնն է այս Աշխատանոցը որ, իր ծախքերը հողալէ դատ, նաեւ տրուած գրամադրութիւն մաս առ մաս կը վերադարձնէ: 1934ին ծախսուած գումարն է Ա. Ո. 199. 5. 9:

1934ին աշխատաւորուհիներուն վճարուած է 52,569 արախով աշխատավարձը: Դրական կերպով ցոյց տալու համար թէ ինչ դեր կատարած է այս Հաստատութիւնը, Իզմիրի աղէտէն վերջ, Աթէնքի հայ գաղութին մէջ, յայտնենք թէ՛ 1923 - 1934, 12 տարիներու ընթացքին, անիկա 1,696,157 արախով աշխատողէք վճարած է հայուհիներու, ինչ որ շատ նշանակալից ծառայութիւն մըն է եւ զբաւականը կը կազմէ օրինակելի անձնութեանը Աթէնքի Տիկնանց Օժանդակ Յանձնախումբի պատուական հայուհիներուն:

1934ին այս Մարմնոյն կազմն էր. — Տիկնայք Մերսետէս Թաքթեան՝ Ատենապետուհի, Պէտրիս Պէլում՝ փոխ-Ատենապետուհի, Հոբիսիմէ Մինասեան՝ Ատենապետուհի, Ռօզա Տէտէան՝ Գանձապետուհի, Քաթերին Գասպարեան՝ փոխ-Գանձապետուհի, Թադուհի Վարդանեան, Յուլիցա Տատուրեան եւ Օր. Թադուհի Պաղատալեան՝ Թորհրդականներ:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Իբրեւ եզրակացութիւն, կ'ամփոփենք հոս 1934 Տարեշրջանի էական արդիւնքները: —

Անցեալ տարի Կեդր. Վարչ. Ժողովը ընդունած է Մասնաւոր Դրամագույնի հաշուոյն նոր կտակներ եւ նուիրատուութիւններ որոնց արձանագրուած գումարն է Ա. Ո. 12616. 0. 0

Իր գանձած ամէն տեսակ հասոյթներուն համագումարը եղած է Ա. Ո. 63183. 0. 0


Այդ Տարեշրջանին հիմնարկութիւններու և ընդհանուր նպաստներու յատկացուցած է Ա. Ո. 33023.16. 9

Եթէ անցեալ տարեշրջանի արդիւնքները չեն կրնար բաղդատութեան դրուիլ Միութեանս յաջողագոյն տարիներուն հետ, բայց պէտք է խոստովանիլ թէ տնտեսական համաշխարհային դժուարութեանց հակառակ, որ ա'յնքան ծանրապէս ցնշած են մեր բոլոր գաղութներուն վրայ անխտիր, ձեռք բերուած արդիւնքը կրնայ գոհացուցիչ նկատուիլ, մանաւանդ որ կարելի եղած է հաւասարակշռել Միութեան Էլեմուտքը, հետապնդելով հանդերձ օգնութեան բազմազան ձեռնարկները եւ կարգադրելով ստիպողական նպաստներ:

Կեդր. Վարչ. Ժողովը այդ բանը կը պարտի իր գործակիցներուն ազնիւ աջակցութեանը, որով սայն Տեղեկագիրը կը վերջացնէ իր ջերմագին շնորհակալութիւնները յայտնելով Միութեանս բոլոր անդամներուն, Գահիրէի եւ Նիւ Եարքի Շրջ. Յանձնաժողովներուն, Շրջ. Յանձնախումբերուն, Տեղական Մասնաժողովներուն եւ Օժանդակ Մարմիններուն, իրաքանչիւրին ցոյց տուած անձնուիրութեան

Եւ վեհանձնութեան համար, ինչպէս նաեւ Հոգեւոր Պետերուն եւ
Հովիւներուն, այն ամէն ազգային կազմակերպութեանց, բարեսէր
ազգայիններուն եւ հայ խմբագիրներուն, որ իրենց բանկազին օժան-
դակութիւնը անցեալ Տարեշրջանին եւս մեր Միութեան տրամադրե-
ցին սիրայօժար :

ՆԱԽԳԱՀ
ԿԵՂՐ ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ
ԶԱՐԵՀ ՆՈՒՊԱՐ




ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ (ԳԱՀԻՐԷ)

- Տ. Ժօզէֆ Մաթոսեան՝ Ատենապետ :
- Տօֆթ. Պետրոս Սերովբեան՝ Փոխ-Ատենապետ :
- Տ. Ճանիկ Զազըր՝ Փոխ-Ատենապետ :
- Տ. Յարութիւն Ամիրայեան՝ Ատենադպիր :
- Տ. Հրանտ Նասիպեան՝ Գանձապետ :
- Տեարք Նշան Եղուպեան, Երուանդ Նազրեան, Տիգրան Հանկեան,
Արամ Տրենց Մարգարեան, Տօֆթ. Ն. Քէչէկեան եւ Լեւոն Բի-
րազեան՝ Խորհրդական :

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ (ՆԻԻ ԵՈՐՔ)

- Տ. Արշակ Գարակէօզեան՝ Ատենապետ :
- Վեր. Խ. Պէննէեան՝ Փոխ-Ատենապետ :
- Տ. Յարութիւն Կիւլպէնկեան՝ Գանձապետ :
- Տ. Վահան Բիրբեան՝ Ատենադպիր եւ Պատուիրակ :
- Տ. Տիգրան Տիրատուրեան՝ Բ. Ատենադպիր :
- Օր. Ա. Ատանապեան, Տ. Մարտիկ Պալեօզեան, Տ. Տ. Ա. Տիֆլեան
եւ Տօֆթ. Աւետիս Բէյ՝ Խորհրդականներ :
- Տ. Միհրան Գարակէօզեան՝ Պատ. Ելմտ. Պատուիրակ :



С. ПЕТЕРБУРГ
ИЗДАТЕЛЬСТВО
1924

№ п/п	Имя	Фамилия	Отчество	Дата рождения	Место рождения	Образование	Служба	Звание	Стаж
1	Иванов	Иван	Иванович	1880	С.Петербург	Высшее	Министерство	Секретарь	10 лет
2	Петров	Петр	Петрович	1885	С.Петербург	Среднее	Суд	Судья	15 лет
3	Сидоров	Сидор	Сидорович	1890	С.Петербург	Среднее	Суд	Судья	10 лет
4	Смирнов	Смирнов	Смирнович	1895	С.Петербург	Среднее	Суд	Судья	10 лет
5	Тихонов	Тихон	Тихонович	1900	С.Петербург	Среднее	Суд	Судья	10 лет
6	Федотов	Федот	Федотович	1905	С.Петербург	Среднее	Суд	Судья	10 лет
7	Харьков	Харьков	Харькович	1910	С.Петербург	Среднее	Суд	Судья	10 лет
8	Цыганов	Цыган	Цыганович	1915	С.Петербург	Среднее	Суд	Судья	10 лет
9	Чайков	Чайков	Чайкович	1920	С.Петербург	Среднее	Суд	Судья	10 лет
10	Шаров	Шаров	Шарович	1925	С.Петербург	Среднее	Суд	Судья	10 лет



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ 29^{րդ} ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

ԳՈՅՔ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1934

ՊԱՐՏՔ

		ԱՆԳԼ. ՈՍԿԻ	ԱՆԳԼ. ՈՍԿԻ			ԱՆԳԼ. ՈՍԿԻ	ԱՆԳԼ. ՈՍԿԻ
Ա. — ԱՆՇԱՐԺ ԵՒ ՇԱՐԺՈՒՆ ԳՈՅՔԵՐ				Ա. — ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ			
1. Անշարժ կալուածներ	148479. 4. 9		1. Հիմնական Դրամագլուխ	64288. 4. 10	
2. Շարժուն գոյքեր (1)	41421. 5. 5		2. Դրամագլուխների պարտադիր կտակներու եւ նուիրատ.	544358. 10. 9	
3. Արժեքուղիքեր	} Ա. ի Թրքաք	602446. 18. 3		3. Դրամագլուխների մասնայատուկ	„ „	286410. 14. 0	
		123429. 16. 3			Գումար.....		895057. 9. 7
	Գումար.....		915777. 4. 8	Բ. — ՊԱՀԵՍՏԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ			
Բ. — ՊԱՏՐԱՍՏ ԴՐԱՄ				1. Պահեստի Հիմնադրամ Հիմնական Դրամագլուխի	4741. 6. 5	
1. Դրամատանց մեջ	30480. 1. 1		2. Պահեստի Հիմնադրամ մասնայատուկ կտակն. եւ նուիրտ.	7107. 4. 10	
2. 1935ին գանձումներ 1934 տարեշրջանի հաշւոյն	1128. 2. 2					11848. 11. 3
3. Կեդրոնական սնուուկը	262. 4. 6		Գ. — ՊԱՀԱՆՋՈՂ ՀԱՇԻՒՆՆԵՐ			
4. Պատրաստ դրամ	} Ամերիկայի Շրջ.Ցանձնաժողովի մօտ	5090. 15. 0		1. Աւանդներ	25390. 13. 11	
		2098. 4. 4		2. Զանազան պահանջատէրեր.	9066. 10. 11	
		630. 6. 5					34457. 4. 10
	Գումար.....		39689. 13. 6	Դ. — ՏՐԱՄԱԴՐԵԼԻ 31 ԴԵԿՏ. 1934ԻՆ			
Գ. — ՊԱՐՏԱԿԱՆ ՀԱՇԻՒՆՆԵՐ				1. Ընդհանուր հասոյթներու հաշւոյն	10009. 8. 2	
1. Զանազան պարտականներ		11972. 10. 9	2. Մասնաւոր հասոյթներու հաշւոյն.	4940. 16. 8	
	Համագումար.....		967439. 8. 11	3. Արտասովոր հասոյթներու հաշւոյն	11125. 18. 5	
					Գումար.....		26076. 3. 3
					Համագումար.....		967439. 8. 11

Բարիգ, 22 Օգոստոս 1935

Հաշուեցնելիչ

վարիչ-Պատուիրակ

Հաշուապետ

ՌՈՒՐԷՆ ԹԱԳԷՈՍԵԱՆ

Վ. ՄԱՆԷՋԵԱՆ

Մ. ՀԷԳԻՄՅԱՆ

(1) Կահ կարասի եւ գիրք	Ա. Ո.	4008. 13. 3
Ձոյլ ոսկի Պարտադիր Դրամագլխի հաշւոյն	„	25307. 1. 5
» » Տրամադրելի գումարներու հաշւոյն	„	12105. 10. 9
	Ա. Ո.	41421. 5. 5
(2) Դրամագլուխներու հաշւոյն	Ա. Ո.	105675. 8. 7
Աւանդներու	»	12868. 3. 5
Տրամադրելի գումարներու հաշւոյն	Ա. Ո.	4886. 4. 3
	Ա. Ո.	123429. 16. 3

ՀԱՍՑԷՆԵՐ

ԿԵԴՐ. ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ, ԲԱՐԻՋ

CONSEIL D'ADMINISTRATION

DE L'UNION GÉNÉRALE ARMÉNIENNE

11, Square Alboni, PARIS

ՇՐՋ. ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎ ԵԳԻՊՏՈՍԻ, ԳԱՀԻՐԷ

COMITÉ RÉGIONAL D'EGYPTE

DE L'UNION GÉNÉRALE ARMÉNIENNE

B. P. 1079.— 11 Chareh Zaki, LE CAIRE

ՇՐՋ. ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ, ՆԻՒ-ԵՕՐԲ

DISTRICT COMMITTEE OF AMERICA

ARMENIAN GEN. BENEVOLENT UNION

381, Fourth Avenue, NEW-YORK